

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

449

700-6

№ 4.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

№ 4.

ՆԻԿ. ԿԱՐԻՆՑԵՎ.

ԵԼԵԿՏՐՈՑԻԿԱՑԻԱՅԻ  
ՊԻՈՆԵՐ

ԵՂԻՍՈՆԸ

Թարգ. Ն. Թ.



15521

ՊԵՏ. ՇՐԱՏԱՐԱԿԶՈՒԹ.

ՅԵՐԵՎԱՆ 1927 թ.

۲۵

۱۰۰

۱۰۰

929 : 537(73) Գրքան

ՆԻԿ. ԿԱՐԻՆՑԵՎ



# ԵԼԵՔՏՐՈՓԻԿԱՑԻԱՅԻ ՊԻՈՆԵՐ Ե ԴԻՍՈՆԸ

15521

A  $\frac{11}{41563}$

Թարգ. Ն. Թ.



Գրանցավ. № 842 (բ). Պատ. № 137. Պեսեր. № 451. Տիրամ 3000

---

«Առարդ»-ի սպարան Լենինականում

## ՀՆԱՐԱԳԵՏ ՏՂԱՆ

Ամերիկյան Պորտ-Ղուրոն փոքրիկ քաղաքը Միչիգան նահանգի Դետրոյտ քաղաքին միացնող չերկաթուղագծով սլանում է առավոտյան գնացքը:

Վագոնները լիքն են գործարան ու արհեստանոց շտապող բանվորներով, վորոնք, դեռ թարմ ու առույգ, կատակներ են անում իրար հետ ուրախ ու զվարթ:

Նրանց մեջ վագոնից վագոն է վազում մի փոքրիկ և ամրակազմ տղա՝ թերթեր և ուտելիքներ առաջարկելով նրանց:

Շարունակ տղայի հնչուն ձայնն է լսվում.

— Առավոտվա լրագիր, թաժա հաց, համեղ ապուխտ . . .

Տղային ամենքը ճանաչում են:

— Այ՛, վո՛րն է ավելի թարմ՝ նորություններդ, թե ապուխտդ:

— Այ՛, տե՛ս, բուտերբրոդների տեղ լրագրներ շտաս, գործարանատերերին է այդ ձեռնտու, բայց վո՛չ մեզ:

Վագոնը թնդում է հնչուն ծիծաղից, իսկ ամենից հնչուն լսվում է փոքրիկ լրագրավաճառի, թոմաս Այ՛վա Եղիսոնի, կամ ինչպես ուղղակի ասում են, Այ՛ի ծիծաղը:

Նա հազիվ 13 տարեկան է, բայց արդեն ոգնում է իր հորը, վոր նոր է պաշտոնագուրկ չեղել իբրև վոչ պիտանի: Տղային հաջողվում է լրագրավաճառի տեղ գտնել չերկաթուղագծի վրա, են չերկաթուղագծի, վոր Պորտ-Ղուրոնը միացնում է Միչիգան նահանգի զլխավոր քաղաք՝ Դետրոյտի հետ: Ամեն որ, առավոտվա գնացքով նա ճանապարհ է ընկնում Դետրոյտ, ամբողջ որը քաղաքում անց կացնում և ուշ չերեկոյան դառնում է սուռն: Նա իր գնումները Դետրոյտումն էր անում, հետո գնում է «Ազատ մամուլի» տպարանը լրագրներ ստանալու, իսկ մնացած ազատ ժամանակը՝ մինչև գնացքի մեկնելը, քաղաքային գրադարանումն է անց կացնում:

Գրադարանում մի քանի հազար գիրք կար և նա վորոշել էր բոլորը կարդալ. նա իր ընթերցումն սկսում է առաջին դարակի մի ծայրից և գրքից գիրք անցնելով, սկսում է կարդալ մեծ ազահությամբ: Եղ ձևով նա կլանում է պատմության, կրոնի, փիլիսոփայության, ճանապարհորդության, մաթեմատիկայի վերաբերյալ բոլոր գրքերը: Վերջինը նրան մեծ դժվարությամբ է հաջողվում. նա չեր կարողանում հասկանալ մաթեմատիքական դժվար ֆորմուլները, և մի ուր, չերբ պատահմունքով բացատրում են նրան պարզ խոսքերով, նա ատելություն է զգում դեպի եղ գիտությունը և ընդմիջտ թողնում է:

Շուտով գրադարանապետն ուշադրություն է դարձնում հարցասեր տղայի վրա, վոր «արշինանոց» հաստափոր գրքեր էր կարդում և սկսում է առաջնորդել նրա ընթերցանությունը:

Կարճ ժամանակամիջոցում լերկաթուղագծի խելացի և ժիր լրագրավաճառը ձեռք է բերում ընդհանուրի սերը: Նա լրագրողներ վաճառելու բացառիկ իրավունք է ստանում. գնացքի վագոններից մեկում նրան մի փոքրիկ սենյակ են տալիս. եղ սենյակը 13 տարեկան տղան իր աշխատանոցն է դարձնում և եդտեղ է անում իր առաջին քիմիական փորձերը:

Քաղաքում Ալ'ն իր ազատ ժամանակը գրադարանումն է անց կացնում, իսկ քաղաք գնալիս ու վերադառնալիս՝ իր աշխատանոցում:

Գնացքի ծառայողներն Ալ'ին կատակով «փոքրիկ պրոֆեսսոր» ելին կանչում: «Փոքրիկ պրոֆեսսորն» իր գրքերի ու փորձերի պատճառով իր գործը չեր մոռանում: Յուրաքանչյուր ուր նա մոտ 200 թերթ էր վաճառում, բայց շուտով նկատում է, վոր պատահում են որեր, չերբ թերթի պահանջն ավալի մեծ է լինում, միայն հարկավոր էր նախատեսել և պահանջը բավարարելու չափով թերթ ունենալ:

Թերթի պահանջը, ինչպես տղան էր նկատել, ավելի մեծ էր լինում ռազմաբեմից նոր լուրեր ստացած որերը:

Եղ ժամանակները Միացյալ Նահանգների Հյուսիսային և Հարավային Նահանգների մեջ պատերազմ էր սկսվել, և ամենքը մեծ հետաքրքրությամբ հետևում ելին պատերազմից լեկած լուրերին:

Մի անգամ Ալլը խմբագրատանը, ռազմաբեմից ստացած, խոշոր տառերով տպած, մի նոր լուր և կարդում՝ Հյուսիսային Նահանգների հաղթութեան մասին. Ալլի մեջ իսկույն եղ լուրն ոգտագործելու միտքն և հղանում, միայն հարկավոր եր նախորոք գրավել ընթերցողների ուշադրութիւնը:



Մի ակնթարթում ծրագիրը պատրաստ, եր:

Նա գնում և հեռագրակայանը և իր ծանոթ հեռագրատան ծառայողին համոզում, վոր նեղ նոր հաղթութեան մասին մի կարճ հեռագիր ուղարկի գծի բոլոր կայարանները, վորով անցնելու չեր ինքը՝ Ալլը, խնդրելով, վոր լուրն աչքի ընկնող տեղ

ցուցադրեն: Դրա փոխարեն Եղիստնը հեռագրատան ծառայողին խոստանում ե տարվա ընթացքում ձրի լրագիր:

Հեռագրատան ծառայողը հեռագիրն ուղարկում ե, իսկ Եղիստնը շտապով եքսպեդիցիան ե գնում թերթերն ստանալու: Սովորական 200 որինակ թերթի փոխարեն, նրան 1500 թերթեր հարկավոր, բայց եղբան փող չուներ իր ձեռին. նա իսկույն գնում ե թերթի գրասենյակը, իր դրուժյունը բացատրում և 1500 թերթ խնդրում, փողը մյուս որը վճարելու պայմանով: Գրասենյակում Ալին ճանաչում ելին, և եքսպեդիտորն իր պատասխանատվությամբ թերթերը տալիս ե Ալին:

Տղան կայծակի արագությամբ դուրս ե թռչում սենյակից, ստանում ե իր թանկագին թերթերը, մի քանի փոքրիկ տղաներ վերցնում հետը իրեն ոգնականներ, շտապում կայարան ու վերջին վայրկյանին հասնում գնացքին:

Նրան հիմա մի խնդիր եր զբաղեցնում, թե կայարաններում ինչպես են ընդունել իր ուղարկած հեռագիրը: Սրտատրոփ մտտենում ե առաջին կայարանին, ուր սովորաբար չերկու որինակ եր վաճառում, իսկ ես անգամ մի վայրկյանում 40 որինակ վաճառեց հաջորդ կայարանում բազմությունը խրոնվում, աղմկում եր, թերթին սպասելով: Նույն պատկերը կրկնվում ե մնացած կայարաններում. ամեն տեղ գնորդների բազմությունը կուվում ե թերթի համար, իսկ Ալի դեմքն ուրախությունից փայլում ե:

Ամենից հաջող ե գնում գործը Պորտ-Հոլրոն կայարանում, ուր տղային մեծ բազմություն եր սպասում:

Յերեկոյան, չերբ տուն դարձավ Ալը, նա հպարտությամբ իր հորը մեծ գումար տվեց, վորը շատ եր ժամանակին տան համար:

Ալի ես չերջանիկ հնարագիտությունը նրա ասպագայի համար մեծ նշանակություն ունեցավ: Նրա մեջ նախաձեռնության վողին ուժեղացրեց և հետաքրքրություն դարձեցրեց դեպի հեռագրագիրը: Առանց հեռագրատան ծառայողի ոգնության Ալին, ի վի հարկի, վոչինչ չեր հաջողվի անել, և նա ամբողջովին խորաբանութեց: Ելեքորականության ե հեռագրի աշխատանքների մեջ: Զանազան գրքերով կարդում եր ուղղությամբ և մի փոքրիկ

գործիք ե գնում իր փորձերի համար: Նրա բխիական աշխատանոցը ելեքտրո-տեխնիքական աշխատանոց դարձավ:

Եղ ժամանակները ինքնուրույն թերթ հրատարակելու միտք հղացավ: Նա մի հին մամուլ (սղմիչ) գնեց, մի քանի մաշված շրիֆտներ. եղ ամենն իրեն փոքրիկ սենյակում սարքեց ու սկսեց շարել: «Ազատ մամուլի» տպարանում անց կացրած ժամերը զուր չեցին անցել Ալի համար. նրա աչքերը սովորել էին փոքրիկ նշաններին, և առաջին մի քանի անհաջող փորձերից հետո, վոր նրան շատ անքուն գիշերներ նստեցին, վերջապես հաջողվում ե նրան սեփական լրագիր ունենալ: Թերթը լույս եր տեսնում շաբաթը մի անգամ և արժեր 3 ցենտ (6 կոպ.): Իսկապես չերկաթուղագծի թերթ եր այդ գնացքում են գրվում, գնացքում շարվում, տպվում ու վաճառվում գնացքում, և նրա բովանդակութունն ել չերկաթուղագծի նորութուններն ելին:

Թերթը չերկաթուղու ծառայողների մեջ մեծ հաջողութուն ունեցավ, և փոքրիկ պրոֆեսսորը հիմա «գլխավոր խմբագիր» դարձավ:

14 տարեկան «հնարագետ տղան» եղպիսով միաժամանակ և՛ խմբագիր եր, և՛ գրաշար, և՛ տպագրող, և՛ վաճառող:

Բայց, ինչպես ասում են, բաղդը հարատե չի լինում. մի որ, գնացքը գնալու ժամանակ, Ալն իր աշխատանոցում աշխատելիս, ձեռից վայր ե գցում լուսածնի լուծվածքով լիքը շիշը: Մի վայրկյանում իր աշխատանոցը, դրա հետ և վագոնն անմիջապես բռնկվում են. կրակը հաջողվում ե հանգցնել, բայց գնացքի ուղեկիցը զայրանում ե: Նա առանց են ել խեթ աչքով եր նայում փոքրիկ աշխատանոցին ու նրա տիրոջ վրա. եղ սենյակից չերբեմն արտասովոր ձայներ ելին լսվում, կասկածելի թըշտոց կամ անդուր հոտ փչում. գնացքի ուղեկիցը վախենում եր եղ բոլորից, և նրան միշտ թվում եր, վոր մի գեղեցիկ որ ամբողջ գնացքը կարող եր ողը ցնդել: Յեվ հիմա, ոգտվելով առիթից, գնացքը կանգնեցնում ե ճանապարհի մեջ տեղը և լուսամուտից մեկ-մեկ դուրս շարտում Ալի բոլոր գործիքները, խեղճ տղին մի քանի պինդ ապտակ ե հասցնում, վորից Ալը չերկար ժամանակ մի ականջով ծանր ե լսում:

Գնացքն իրենն ճանապարհը շարունակում ե, իսկ խեղճ Ալ'ը մնում ե մենակ կանգնած իր փշրած շըշերի և փչացած գործիքների հետ... Նրա բոլոր ծրագրներն ողը ցնդեցին, գեղեցիկ հույսերը խորտակվեցին—վերջ «փոքրիկ պրոֆեսսորին», վերջ «գլխավոր խմբագրին»: Արցունքներն աչքերին, ճանապարհի մեջ տեղը կանգնած, հարվածներից շըշմած ու խլացած, չգիտեր՝ ինչ աներ, ի՞նչ մտածեր...

Նդիստոնը, հետո սլատմում եր, վոր արկածներով հարուստ իր կյանքում, չերբեք եղբան ծանր հուսահատությունն չի ապրել, ինչպես են շարաբաստիկ առավոտը, չերբ դուրս վռնդեցին իրենն իր սիրած աշխատանոցից:

Սակայն չերկար հուսահատվել պետք չեր. հարկավոր եր աշխատանքը նորից շարունակել:

Նա առաջվա նման մնում ե լրագրավաճառ և շարունակում իր ճանապարհորդությունները Դետրուատ, իսկ ազատ ժամերն ու կիրակի որերը՝ ելեքտրականությամբ պարապում: Նա ուղում եր, վոր ինքը փորձի հեռագրաթելեր ու ապարատ սարքել: Նա մի գիրք գնեց հեռագրի մասին և իր նոր ընկեր՝ Ջեմս Ուարդի հետ մի անգամ տարորինակ փորձ արավ: Նրանք չերկաթի մի լար են ձեռք բերում, և ընդջրյա մի հին պարանի կտորի ոգնությամբ եղ լտրն անց են կացնում փողոցով, վոր միացնում եր իրենց տները: Նրանց ելեքտրական հոսանք եր հարկավոր, վորն ամենադժվար բանն եր. բայց տղաները չեն հուսահատվում: Ալ'ը կարգացել եր, վոր լարը կատվի մազին շփելով կարելի չե ելեքտրականություն ստանալ:

Նրանք չերկու մեծ կատու չեն բռնում և մետաղե լարը մեծ դժվարությամբ փաթաթում կատուների վտաքերին, և չերկու հնարագետներն սկսում են ձեռքերով շփելը մազը: Բայց կատուներն ընդհանրապես անպետք են ելեքտրական մարտկոցներ փոխարինելուն, իսկ եղ կատուները գիտությանը ծառայելու վոչ մի ցանկությունն չունեցին—կատաղած մլավում ելին և ամեն կերպ աշխատում ազատվել իրենց գերությունից: Տղաների ձեռները շանգուտելով կատուները պոչներն առնում են ու փախչում: Տղաները փորձն ել չեն կրկնում:

Բայց Ալ'ը չի վհատում, մեծ դժվարութեամբ հավաքած իր փողերովն ելեքտրական տարրեր և ապարատներ ե ձեռք բերում, և մեծ համբերութեամբ ու տոկոսութեամբ զբաղվում զանազան փորձերով, իսկ նրա ընկեր Ջեմս Ուարդը, չկարողանալով մնալ Ալի խոնավ ու մռայլ նկուղում, հուսահատված թողնում է ու հեռանում:

Ալի ամենամեծ դժբաղդութիւնը հեռագրել չիմանալն էր և սովորելու չել վոչ մի հնար շուներ: Ես անգամ նրան ոգնութեան ե գալիս մի պատահական դեպք և նրա վոչ մի բանի առաջ կանգ չառնող բնավորութիւնն ու համարձակութիւնը:

1862 թիւն էր, ամառվա շոք որ. ապրանքա-մարդատար գնացքը, վորով Ալ'ը միշտ չերթևեկում էր, կանգ առավ Մուստկլեմեննս կայարանում, վորտեղ վագոնները մի գծից մյուս գիծն էլին փոխադրում. եղ կես ժամ էր տևում, իսկ եղ ժամանակամիջոցին, Ալ'ը սովորաբար կայարանապետ Մեկենզի չերկու տարեկան չերեխայի՝ Ջիմմի հետ խաղ էր անում:

Եղ որը Ալ'ը, թերթերի կապոցը թևի տակը կանգնած՝ ճուտերին էր նայում, չերբ հանկարծ շուռ ե գալիս, տեսնում մի սարսափելի պատկեր: Ապրանքատար գնացքն աղմուկով անցնում ե չերկաթուղագծով, իսկ եղ նույն գծի վրա կռնակով դեպի գնացքը փոքրիկ Ջիմմը պառկած խաղ ե անում ավազի և փոքրիկ քարերի հետ: Մի ակնթարթ... և չերեխան կորած էր... Ալ'ը, առանց մի վայրկյան իսկ մտածելու, ձեռի լրագիրները մի կողմն ե շարտում, չերեխային հասնում, գրկում և նրա հետ միասին գծի մյուս կողմը թռչում, ընկնում մոտի աղբակուլտի վրա:

Յերկու չերեխայի մահն այնքան էր մոտ, վոր շոգեմեքենան Ալի կոշիկի կրունկը պոկել էր. ենքան թափով էր թռել Ալ'ը, վոր աղբակուլտի տաշեղները խրվել էլին չերեխաների մարմնի մեջ, վոր հետո մեծ դժվարութեամբ հանեցին:

Իսկույն Մեկենզիին կանչում են, վոր կարգադրում ե չերեխաներին պատժորժ տանեն, ուր Ջիմմի մայրը նրանց վերբերը մաքրում և ու լվանում: Թեև ցավերը շատ էլին ուժեղ, բայց Եղիսոնը, առանց ձայն հանելու, մեծ համբերութեամբ

տանուամբ եւ եղ տանջանքները և գոհ ու ժպտադեմ հայուամբ եւ իր փրկած չերեխային:

Մեկենգին հարուստ չեր և Եղիսոնին հետևյալն եւ առաջարկում.

— Արած լավությանդ արժանի հատուցումը տալու հնարավորությունը չես չունեմ, դրա փոխարենը կարող եմ քեզ հեռագրելու արհեստը սովորեցնել, հետո հեռագրատանն ամսական 25 դոլլարով պաշտոն գտնել քեզ համար. համաձայն ես ես առաջարկիս:

Այլի դեմքն ուրախությունից փայլեց:

Համաձայն ե... Յեթե Մեկենգին նրան նույնիսկ մեծ գանձեր խոստանար, դժվար թե իրեն ավելի չերջանիկ զգար Այլը:

Յեվ Այն սկսեց սովորել հեռագրելը: Յերեք ամսից հետո, նա իր ուսուցչից ել լավ եր հեռագրում և ազատ կարող եր ամեն հեռագրատան ծառայողի պաշտոն տանել:

## Ծ Ա Ն Ր Տ Ա Ր Ի Ն Ե Ր

Հեռագրատան ծառայող դառնալուց հետո, Եղիստեն սկըսում է թափառական կյանք վարել: Պատճառը մի կողմից նրա հետախուզող բնավորությունն էր, մյուս կողմից՝ նրա մեծ սերը դեպի ճանապարհորդությունը:

Ստրաֆֆորդում նա գիշերային հեռագրակատարի պաշտոն է ստանում, ամսական 25 դոլլարով: Բայց պաշտոնը շատ էր ծանր, վորովհետև հեռագրապետն ամենաչնչին սխալի համար խիստ պատիժների չէր չենթարկում: Իր ստորադրյալների գիշերային հերթապահությունը ստուգելու համար, նա ստիպում էր նրանց, վոր կես ժամը մի անգամ հեռագրեն «SIX» (վեց) բառը:

Եղիստենը գիշերները միշտ քնով էր լինում: Ցերեկները Ստրաֆֆորդի շրջակայքն էր պտըտվում կամ հարևան հեռագրատներն այցելում. հաճախ ենքան չերկար ելին տևում եղ զբոսանքները, վոր նա հազիվ էր հասնում իր պաշտոնին, բնական էր, գիշերները հոգնած չէր կարող արթուն մնալ:

Կեսժամյա վերահսկումից ազատվելու համար, Եղիստենը չերկար ժամանակ միտք է անում մի հնարով ազատվի. և վերջը մի միտք է հղանում: Ժամացույցին մի փոքրիկ անիվ է ամրացնում և մետաղյա լարի միջոցով միացնում հեռագրական ապարատի հետ: Ամեն անգամ, չերբ լրանում է կես ժամը, դիպչում էր անիվին, վորն իսկույն շարժվում էր և ապարատի վրա «SIX» բառը գրվում: Իսկ եղ ժամանակ Եղիստենն իր սենյակում հանգիստ քնած էր:

Եղիստենի խորամանկությունը չերկար ժամանակ չտևեց: Մի անգամ, հեռագրատան ծառայողները նկատեցին, վոր «SIX» բառը հեռագրելիս, իրենց ապարատի վրա C և Φ տառերը պարզ չեն նշմարվում: Սկսեցին հետաքրքրվել և գտան Եղիստենի խո-

րամանկությունը: Յենթադրելով, վոր կարող են իրեն խիստ պատժի տալ, պատանին վորոշեց փախչել:

Շտապով գնում է պահեստանոց, վորտեղ գնացքները կանգնած՝ պատրաստվում էին Սարնիա ուղևորվելու. Եղիստնը մեքենավարին համոզում է, վոր իր ծառայութեան գործերով է շտապում և հետը գնում է: Բայց մինչև Ստրաֆֆորդի սահմաններին դուրս գալը, վորը պատկանում էր այդ ժամանակ անգլիացիներին, իրեն շատ անհանգիստ էր զգում, մինչև իր հայրենի սահմանները՝ Պորտ-Հոլրոն հասնելը:

Իր հայրենիքում անց կացրած կարճ ժամանակամիջոցում, նա հեռագրական գործի մեջ մի գյուտ է կատարում, վորի շնորհիվ ամբողջ Հյուսիսային Ամերիկայում մեծ հռչակ է ձեռք բերում:

Եղ տարին շատ ցուրտ ձմեռ էր:

Հոլրոնի լճից սառցի հակաչական լեռներ էին գոյացել, բռնել ջրի լերեսը և աննավարկելի լեյին դարձրել վոչ միայն Սեն-Կլեր գետը, վորը Սարնիան Պորտ-Հոլրոնի հետ էր միացնում, այլև լերկու բաղաքը միացնող ընդջրյա հեռագրաթելերն էլ էին կտրել:

Դիմում են Եղիստնին, վորը գալիս է և պարզ ձևով լուծում հանելուկը:

Նա շոգեմեքենան մոտեցնում է գետին և շոգեմեքենայի շշակի ոգնութեամբ հարցնում.

«Այլո, Սարնիա, լսվում է ասածս»:

Շոգեմեքենայի շշակը չէր կարող խոսել, ի հարկե, բայց հեռագրի ալֆավիտը, վոր կազմված է գծերից ու կետերից, Եղիստնը լերկար և կարճ հնչյունների միջոցով կարողանում է վերարտադրել: Մի ամբողջ լեզանակ է կազմում, վորը տարորինակ կերպով հնչում էր սառն ողում:

Պորտ-Հոլրոնի բնակիչները, վոր շոգեմեքենայի շուրջը հավաքված՝ մեծ հետաքրքրութեամբ նայում էին ես բոլորին, զարմանում էին և ծիծաղում տղայի վրա: Վոչ վոք չէր հավատում, վոր կարելի չէ խոսել շոգեմեքենայի շշակի ոգնութեամբ. բայց Եղիստնը մեծ համբերութեամբ շարունակում էր իր գործը և ժամանակ առ ժամանակ հարցնում.

— Ալլո, Սարնիա, լավ՞ում ե ասածս:

Սարնիայում, վերջապես, ուշադրութիւն են դարձնում հաշորդաբար և միշտ նույն ութմով կրկնվող տարորինակ ձայների վրա:

Հեռագրատան ծառայողներից մի քանիսն ականջ են դրնում և իսկույն գլխի ընկնում, թե բանն ինչու՞մ ե. գետի ափին Սարնիայում ճիշտ նույն տեսակի շոգեմեքենա չեր դըրված, և Պորտ-Հոլրոնում պարզ լավում ե՞

— Լսում եմ, ի՞նչ ե պատահել:

Եղիսոնի պատվին կեցցեներ են լավում չորս կողմից: Ես պիտով, Սարնիան և Պորտ-Հոլրոնը, շնորհիվ շոգեմեքենայի, նորից հեռագրով միացվում են իրար հետ:

Տասնևվեց տարեկան տղայի համար ես հնարագիտութիւնը հասարակ բան չե, և Եղիսոնը հեռագրատանը պաշտոն ե ստանում:

Բայց, ինչպես գիտենք, Եղիսոնը մի տեղ չերկար մնալու սեր չուներ:

Թեև դեռ տասնևյոթ տարեկան եր, բայց նա շատ եր ճանապարհորդել— չեղել եր Ադրիան, Ֆորտ-Ուաշն, Ինդիանոպոլ, Յինցինատ, Մեմֆիս: Ամեն տեղ նա իրեն ցույց եր տվել վորպես հեռագրատան հմուտ ծառայող և ամեն տեղ ելեքտրական ապպարատները կատարելագործելու վրա չեր աշխատում:

Ինդիանոպոլում նա մի ինքնաշարժ ապպարատ ե հնարում, վորը կարողանում ե, առանց մարդու ոգնութիւն, հեռագրները մի գծից մյուս գիծն ուղարկել:

Հենց նույն տեղի կայարանապետը եղ ժամանակները նրման մեքենա հնարելու վրա փորձեր եր անում, վոր կարողանա Նյու-Յորքից Նյու-Որլիան հեռագրներ ուղարկել, առանց հեռագրատան ծառայողի ոգնութիւն:

Նրա փորձերն անհաջող են անցնում: Եղիսոնը մտածում ե, վոր իր նոր արած գյուտը կարող ե պետք գալ և մի քանի փորձեր ե անում, վորոնք մեծ հաջողութիւն են ունենում. բայց կայարանապետը զայրանում ե: Նա մարդկային հասկացողութիւններին հակառակ ե գտնում ես չերևույթը, վոր իր ստորադրյալներից մեկը, են ել մի ջահել տղա, կարող ե եղ

տեսակ գյուտ անել, են, ինչ վոր իրեն չի հաջողվել ենքան փորձերից հետո:

Նա կատաղությունից մի կեղծ թուղթ է գրում Եղիսոնի դեմ և, վորպես վատ աշխատողի, պաշտոնագուրկ անում:

Ես չերկրորդ անգամն է, վոր Եղիսոնի գյուտ անելու հանձարը նրան դժբաղդության մեջ է գցում, բայց ես անգամվա հարվածն ավելի ծանր եր: Նա սովորաբար, իր աշխատավարձի մեծ մասը ծնողներին եր ուղարկում, և հենց նոր եր իր ոռճկի մեծ մասը տուն ուղարկել, բացի եդ, իր արած փորձերը շատ թանգ ելին նստում իրեն. նա նորից մնաց դուրսը, փողոցում, առանց կոպեկի, հին ու մաշված շորերով:

Չմեռը մոտենում եր, իսկ խեղճ Եղիսոնը ստիպված եր ամառվա թեթև զգեստով ման գալ:

Սակայն, նա ընկճվող բնավորություն չուներ. և վճռեց վոսֆով Լուիզիան գնալ: Նա մի քանի տասնյակ մղոն տարածություն պիտի անցներ, բայց նա ուժեղ եր և առողջ. ու մրտքում հազար ու մի շքեղ ծրագրներ կազմելով՝ ճանապարհ ընկավ:

Պետք եր չերևակայել, թե նա ի՞նչ դրությամբ է հասնում Լուիզիան: Պակասն էլ չեղանակներն են լրացնում: Սառցապատ փողոցներով ցրտից ու հոգնածությունից վոտքերը հազիվ քաշ տալով, առաջ է գնում բոլորովին սառած ու թուլ, իրեն ամառվա զգեստը հագին, ծղնոտե գլխարկը՝ գլխին:

Տեղ հասնելուն պես նա իսկույն գնաց հեռագրատուն իրեն համար պաշտոն գտնելու:

Հեռագրատան ծառայողները հեգնանքով են նայում ցրնցոտիների մեջ կորած պատանու վրա:

Իսկ տերը մի տեսակ կասկածով է նայում վրան: Եղիսոնն ուզում եր անմիջապես թողնել ու հեռանալ անհյուրընկալ կայարանից, բայց ուրիշ չելք չուներ, պատմեց իր դրությունը և իր շնորհքը ցույց տալու իրավունք խնդրից: Նրա ցանկությունը կատարեցին և տեղ տվին կայարանում:

Լուիզիանում Եղիսոնը մեծ չեռանդով գործի անցավ. նա մեծ վարժություն է ձեռք բերում—մի բոպելում 45 բառ է հեռագրում: Միաժամանակ նա առանց հոգնելու ելեքտրականու-

թյանը վերաբերյալ ընթերցանությամբ և փորձերով և պարապում:

Եղ ժամանակները Եղիսոնի հետ մի դեպք պատահեց, և թիչ եր մնում կյանքը զոհ գնար: Մի առավոտ, գրքերի կապոցը ուսին՝ հեռագրակապանից տուն եր դառնում. վոստիկանը, առավոտը վաղ տեսնելով բեռնակիր մարդուն, գողի տեղ և դընում և ձայն և տալիս, վոր կանգնի: Եղիսոնը, մի ականջով ծանր և լսում, հանգիստ շարունակում և իրեն ճանապարհը: Վոստիկանի արձակած գնդակը բարեբաղդաբար մոտովն և անցնում: Եղիսոնը զարմացած հետ և նայում իմանալու՝ ինչ և պատահել. վոստիկանը տեսնում է, — վոր վոչ թե գող է; այլ ամբողջ քաղաքին հայտնի՝ հեռագրատան ծառայողը. վախեցած Եղիսոնի գիրկն և ընկնում, համբուրում, ներողություն խընդրում: Յեվ ամեն ինչ լավ և վերջանում:

Բայց հիմա չե՛լ մի ուրիշ դժբաղդություն եր սպասում նրան:

Եղիսոնը սովորաբար ազատ ժամանակներին շրջակայքըն եր գնում զբոսանելու:

Մի անգամ ել կես որին գնում և շոգեմեքենաների պահեստանոցը. առանց չերկար մտածելու պահեստանոցի շոգեմեքենաներից մեկը վերցնում և ու գնում պտուկտի:

Մեքենավարը վերադառնում է, տեսնում, վոր իր մեքենան մի անձանոթ մարդու առաջնորդությամբ պտուկտներ և անում: Մեքենավարն առանց վորևե պատժի մեղմորեն խրոկում և Եղիսոնին, իսկ հեռագրապետն ավելի խիստ և վարվում և պաշտոնից հեռացնում է:

Սկսում է նորից իրեն համար նոր տեղ փնտրել, վորը հաջողվում է իր ծննդավայրում՝ Պորտ-Հուրոնում:

Տարի ու կես Պորտ-Հուրոնումն է մնում և եղ ժամանակամիջոցում մի նոր գյուտ և անում՝ վի ընդջրյա հեռագրաթելով յերկու ելեքտրական հոսանք կարելի չեր հաղորդել:

Ընկերությունը, ուր ծառայում եր Եղիսոնը, նրա նոր արած գյուտից մեծ չեկամուտներ և ստանում, իսկ գյուտ անողին չնչին վարձատրություն և տալիս՝ Պորտ-Հուրոնից Բոս-

տոն գնալու ձրի մի տոմս: Բոստոնում, Ֆրանկլինի անվան հեռագրակայանում նոր պաշտոն է ստանում:

Եղիստնը 21 տարեկան եր արդեն և նրա հպարտ, մեծ ծրագրերների համար հեռագրատան ծառայողի պաշտոնը շատ եր անբավարար ու նեղ. նրա մտքերը հեռուներն ելին թռչում:

Չորս որ ճամբորդելուց հետո, հասնում է Բոստոն, շատ խղճուկ արտաքինով, հին ձևի զգեստով և տեղի հեռագրատան ծառայողների վրա վատ տպավորութուն է անում, և կասկածով են նայում վրան:

Բայց և այնպես պայմանավորվում են հետը, վոր մի քանի ժամից հետո անցնի: Նշանակած ժամին Եղիստնը գալիս է հեռագրատուն. հեռագրատուն ծառայողները վորոշել ելին մի խաղ խաղալ «հեռավոր արևմուտքից չեկած միամտի» վրա, — եղպես ելին անվանել նրանք Եղիստնին:

Իրենց ծրագրած կատակի մասին նախորոք հայտնում են Նյու-Յորքի հեռագրատուն, և վորոշում են՝ հենց վոր տեղի հմուտ ծառայողներից մեկը Բոստոնի մեծ թերթերից մեկի համար չերկար հեռագիր տա, հեռագիրն ընդունելու համար դնեն նորելուկին:

Եղպես ել անում են:

Եղիստնը, գործին անտեղյակ՝ անցնում է աշխատանքի: Նյու-Յորքի ծառայողն սկսում է դանդաղ հեռագրել, հետո կամաց-կամաց արագացնում է և մի ըրպեում 40 բառ հեռագրում:

Եղիստնը, վոր 45 բառը մի ըրպեում խաղ ու պարով եր հեռագրում, եղ արագության վրա չի զարմանում: Յերբ շորս կողմն է նայում Եղիստնը, տեսնում է, վոր իր ընկերները հետաքրքրությամբ հետևում են իրեն ու ծիծաղում:

Եղիստնն իսկույն գլխի չե ընկնում բանի ելությանը, բայց առանց շփոթվելու և ցույց տալու, վոր ինքը գլխի չե ընկել, հանգիստ շարունակում է իրեն գործը, ժամանակ առ ժամանակ փոխելով ձեռի մատիտը: Նյու-Յորքի ծառայողը շարունակում է հեռագրելը, բայց, տեսնելով, վոր չի կարողանում հաղթել, խորամանկութունների չե դիմում՝ կրճատումներ է անում կամ բառերը միացրած հեռագրում. սակայն Եղիստնը, վոր սո-

վոր եր եղ տեսակ աշխատանքի, առանց սխալվելու շարունակում ե իր գործը:

Տեսնելով, վոր ես կատակը չերկար ե տևում, մասնավոր ապպարատով Նյու-Յորքի ծառայողին դիմում ե.

— Լսեք, ընկեր. կարծես թե դուք թեթև հանգստի կարիք եք զգում:

Նյու-Յորքի ծառայողը շփոթվելով, իր տեղը տալիս ե ուրիշի:

Ես փոքրիկ միջադեպը Եղիսոնի կյանքում մեծ դեր ե խաղում. ամենքն աշխատում են հետը ծանոթանալ և ընկերանալ:

Ես դեպքից հետո, կարծես թե բաղդը ժպտում ե նրան: Հայրը նորից պաշտոն ե ստանում, ինքը աշխատանք ե ունենում, և իր խառը ծրագրները, վոր պարտվում ելին գլխում, սկսում են պարզվել ու պայծառանալ:

Առաջին գյուտը, վոր անում ե Բոստոնում՝ ձայները հեռագրի միջոցով հաշվելն ե այդ:



Եղիսոնը նկատել եր, վոր Ամերիկյան պարլամենտում քվեարկության վրա ավելորդ ժամանակ ե գնում, եղ գործը դյուրացնելու համար մի նոր ապպարատ ե հնարում հետևյալ ձևով.

Ամեն մի պատգամավորի բազկաթուռին չերկու կոճակ ե ամրացրած «այո»-ի և «վոչ»-ի համար, չերբ պատգամավորը սեղմում ե ես կամ են կոճակը, համրիչը, վոր միացրած ե կոճակների հետ, ցույց ե տալիս քվեարկության հետևանքը. ես գյուտն առանձին նշանակութունն չուներ, բայց ցույց եր տալիս, թե ինչ տենդային արագությամբ եր գործում Եղիսոնի միտքը: Նրա մյուս գյուտն անագին դեր խաղաց: Այդ այն եր, վոր մի հեռագրաթելով միաժամանակ մի քանի հեռագիր ելին տալիս:

1869 թ. Եղիսոնը մի գծով չերկու հեռագիր տալու փորձ արավ. թեև փորձն ենքան ել հաջող չանցավ, բայց ինքը համոզված եր, վոր ուղիղ ճանապարհի վրա չե կանգնած և իր նպատակին կարող ե հասնել: Բայց նրա համար մի բան ել եր պարզ, վոր դրա համար ավելի մեծ քաղաք եր հարկավոր, քան Բոստոնը, և վորոչեց Նյու-Յորք գնալ:

1551

41563



Բոստոնում անց կացրած նրա չերկու ու կես տարին բավական շահեկան անցան:

Ընկերները նրա արտասովոր աշխատասիրությունից և վառ չերեակայությունից զարմանալի պատմություններ ելին անում:

Եղիստնը Բոստոնում իր ընկեր Ադամսի հետ եր ապրում. նա պատմում եր, վոր Եղիստնն իր գիշերային աշխատանքից ուշ տուն դառնալուց հետո, նստում եր և մինչև լուսադեմ ընթերցանությամբ պարապում: Յերկու ընկեր միասին ելին ճաշում ճաշարանում, վոր մեկ քառորդ մղոն հեռավորության վրա չեր գտնվում իրենց տնից. ընկերը պատմում եր, վոր Եղիստնը ճանապարհին միշտ մի բան եր մտածում և նոր ու նոր ծրագրերն եր կազմում շարունակ: Մի անգամ ել, ճաշարան գնալիս հանկարծ բացականչում ե՝

— Ադամս, չես ենքան շատ անելիքներ ունեմ, բայց մեր կյանքը շատ ե կարճ. և մենք ենքան դանդաղ ենք շարժվում, —ասում ե ու շտապով գնում ճաշում, տուն վազում պարապելու:

Բոստոնում Եղիստնն ամեն առիթից ոգտվում եր, ցույց տալու, վոր ելեքտրականությունը նույնիսկ շատ փոքրիկ բաներում, կյանքում միշտ կարելի չե գործադրել, ոգտվել: Ինչպես որինակ՝ Բոստոնի հեռագրատանը շատ թախտաբիթիներ (փայտոջիլ) կային, վորոնք թունավորում ելին ծառայողների կյանքը, և վոչ մի կերպ չեյին կարողանում վոչնչացնել. Եղիստնը վորոշում ե ելեքտրականության միջոցով վոչնչացնել նրանց:

Պատից 2 անագե թիթեղ ե կպցնում և միացնում ելեքտրական մարտկոցի հետ. հենց վոր միջատները թիթեղի վրա չեն հավաքվում, իսկույն բաց ե թողնում ելեքտրական հոսանքը և միջատներն անմիջապես սատկում, թափվում են:

Բայց ես բոլոր գյուտերն ու փորձերը նրան չեն բավարարում:

Բոստոնի հեռագրատունը նեղ եր նրա համար ու փոքր. և մի որ հավաքում ե իր ունեցած-չունեցածը ու ճամբա ընկնում, իր շքեղությամբ ու մեծությամբ Եղիստնին վաղուց գրավող բաղաբը—Նյու-Յորք:

Բոստոնում անց կացրած նրա չերկու ու կես տարին բավական շահեկան անցան:

Ընկերները նրա արտասովոր աշխատասիրությունից և վառ չերեակալությունից զարմանալի պատմություններ ելին անում:

Եղիստնը Բոստոնում իր ընկեր Ադամսի հետ եր ապրում. նա պատմում եր, վոր Եղիստնն իր գիշերային աշխատանքից ուշ տուն դառնալուց հետո, նստում եր և մինչև լուսադեմ ընթերցանությամբ պարապում: Յերկու ընկեր միասին ելին ճաշում ճաշարանում, վոր մեկ քառորդ մղոն հեռավորության վրա չեր գտնվում իրենց տնից. ընկերը պատմում եր, վոր Եղիստնը ճանապարհին միշտ մի բան եր մտածում և նոր ու նոր ծրագրերն եր կազմում շարունակ: Մի անգամ ել, ճաշարան գնալիս հանկարծ բացականչում ե՝

— Ադամս, չես ենքան շատ անելիքներ ունեմ, բայց մեր կյանքը շատ ե կարճ. և մենք ենքան դանդաղ ենք շարժվում. —ասում ե ու շտապով գնում ճաշում, տուն վազում պարապելու:

Բոստոնում Եղիստնն ամեն առիթից ոգտվում եր, ցույց տալու, վոր ելեքտրականությունը նույնիսկ շատ փոքրիկ բաներում, կյանքում միշտ կարելի չե գործադրել, ոգտվել: Ինչպես որինակ՝ Բոստոնի հեռագրատանը շատ թախտաբիթիներ (փայտոջիլ) կալին, վորոնք թունավորում ելին ծառայողների կյանքը, և վոչ մի կերպ չելին կարողանում վոչնչացնել. Եղիստնը վորոշում ե ելեքտրականության միջոցով վոչնչացնել նրանց:

Պատից 2 անագե թիթեղ ե կպցնում և միացնում ելեքտրական մարտկոցի հետ. հենց վոր միջատները թիթեղի վրա չեն հավաքվում, իսկույն բաց ե թողնում ելեքտրական հոսանքը և միջատներն անմիջապես սատկում, թափվում են:

Բայց ես բոլոր գյուտերն ու փորձերը նրան չեն բավարարում:

Բոստոնի հեռագրատունը նեղ եր նրա համար ու փոքր. և մի որ հավաքում ե իր ունեցած-չունեցածը ու ճամբա ընկնում, իր շքեղությամբ ու մեծությամբ Եղիստնին վաղուց գրավող քաղաքը—Նյու-Յորք:

են իրենց անհամբերութիւնը սուր ձևով արտահայտել, աղմկել: Թերթի խմբագիր Լաուէն և ծառայողները չգիտեն՝ ինչ անեն, իսկ վարպետին կանչելը կարող եր գործն ուշացնել:

Եղիստնը, վոր բազմութեան հետ միասին գրասենյակն եր մտել, ոգտվելով առիթից, մոտեցավ մեքենային և մի վայրկյանում ուշադրութեամբ սկսեց զննել: Վորպես ամերիկացի, նա մտածեց, վոր ես առիթն իրեն առաջ զնայու մեծ հնարավորութիւններ կարող ե տալ: Առանց վայրկյան իսկ կորցնելու, մոտեցավ հոսահատ միստեր Լաուէին և հանգիստ տոնով ասաց.

— Միստեր Լաուէ, յես կարծում եմ, կարող եմ ձեզ ասել, թե ինչ ե պատահել ձեր մեքենայի հետ: Զսպանակներից մեկը կոտրվել ե ու մնացել ատամնավոր անիվների մեջ, վոր և խանգարում ե մեքենայի աշխատելուն:

Լաուէն նայեց Եղիստնի վրա, կարծես թե չերկնքից եր ընկել եդ պատանին իր նեղ վայրկյանին:

— Դուք կարող եք կարգի բերել մեքենան, — հարցրեց նա, — չեթե կարող եք, արեք, յես ձեզ լավ կը վարձատրեմ:

Եղիստնը կարող եր, ի հարկ ե. և մի քանի վայրկյանից մեքենան սկսեց աշխատել:

Լաուէն հիացած եր. նա անմիջապես իր գրասենյակում գործավարի պաշտոնն առաջարկեց՝ ամսական 300 դոլլարով:

Եդ որվանից նրա կյանքում բեկումն ե կատարվում, և բաղդն այլևս նրան չի թողնում:

Լաուէի մոտ պաշտոնավարելու ժամանակ սա մի քանի նոր ավտոմատիք ասպարատներ ե հնարում, վորոնք և՛ հարմար եյին, և՛ գործնական. նա մի նոր տեղ ե գտնում ելեքտրական ընկերութեան մեջ, վորտեղ նրա գլուտը գնահատութեան ե արժանանում: Նրան հնարավորութիւն են տալիս վաճառելու իր հնարած մեքենաները, վորտեղ ինքն ե ծառայում:

Եղիստնն, իրեն հատուկ հեգնական ժպիտով, պատմում եր իր առևտրի մասին: Ինքը չգիտեր՝ վորքան գնահատեր իր այդ գլուտը, վորպեսզի վոչ շատ պահանջկոտ չերևար, վոչ ել ծիծաղելի դրութեան մեջ ընկներ, վորոշեց 5.000 դոլ. գնահատել, բայց նա կասկածում եր, թե եդ տեսակ գումար կը տան իրեն:

Յերբ սկսում են բանակցութիւնները, առաջարկում են, վոր Եղիսոնն իր գնահատութիւնը տա, Եղիսոնը չի համարձակվում և խնդրում է՝ իրենք գնահատեն:

— Ի՞նչ կասի միտեր Եղիսոնը, յետե 40,000 դոլլար նշանակենք, — լսում է պատասխանը:

Եղիսոնը եղ խոշոր գումարը լսելուց՝ շփոթվեց, բայց հուզումը զսպելով ասաց.

— Այո, համաձայն եմ եղ գումարին:

Բայց չերբ վոր մենակ է մնում, ուրախութիւնից թռչկոտում է, պարում և ինքն իրեն կրկնում.

— Քառասուն հազար, քառասուն հազար...

Ապագան առաջը վառ գույներով է պատկերանում — նոր աշխատանոց, շքեղ ու հետաքրքիր իրեր... Բայց, հանկարծ սիրտը կասկած է ընկնում. գուցե ընկերութիւնը դիտավորյալ կերպով կատակ էր անում իր հետ և դա ծաղր էր միայն և ուրիշ վոչինչ: Մեկ-մեկ սկսեց հիշել դրամատերերի բոլոր կատակները, վոր սարքում են մարդկանց ծաղրելու համար:

Մյուս որը, առավոտը վկայականը մոտն են բերում ստորագրելու, վոր գյուտն արդեն գնված է 40,000 դոլ. ստորագրում է և գնում դրամանտուն՝ փողը ստանալու: Դրամատան ծառայողները փրսփսում են, բայց ինքը ծանր լսելու պատճառով, չի լսում. եղ բավական էր, վոր Եղիսոնը համոզվեր, վոր իր չենթադրութիւնը ճիշտ է. քիչ է մնում ձեռքի չեքը վոչնչացրնի: Վերջ ի վերջո իր 40,000 դոլարն ստանում է:

Եղ փողերով Եղիսոնը մի մեծ արհեստանոց է սարքում իր արած գյուտերը պատրաստելու համար. արհեստանոցի կողքին ել մի աշխատանոց՝ փորձերի համար: Նա եղ բաների համար ձեռի փողը չեր խնայում, և չերբ ամեն ինչ պատրաստ էր, կարծես թե 40,000 դոլլար չեր ել ունեցել:

Բայց դրա փոխարեն, Մենլո-Պարկում, Նյու-Յորքից 40 վերստ հեռավորութիւն վրա, նա մի գեղեցիկ աշխատանոց ուներ արդեն, ուր կարող էր ազատ ու հանգիստ իր փորձերն ու գյուտերն անել: Կարճ ժամանակում նա յերկու մեծ գյուտ արավ — կվադրուպլեֆու-հեռագրական ապարատը յեվ ավսո-

մաս հեռագրական ապապարաս, վորոնց մասին հետո կըխոսենք:

Միաժամանակ նա խորասուզվել էր իրեն հետաքրքրող ելեքտրական յերևույթների ու խնդիրների մեջ:

Համոզվելով, վոր հրաշագործ ելեքտրական ուժն առորչա կյանքում կարելի չէ շատ լավ գործադրել, նա եղ ուղղությամբ է աշխատում և մոտ 45 գյուտ անում:

Մեկը դեռ չվերջացրած, մյուսի միտքն է հղանում ու նըրանով զբաղվում:

Նրա ոգնականները զարմանում էին նրա գյուտերի եղ հեղեղի վրա, վոր կարծես թե վերջ չունեն, իսկ գյուտերի բյուրոյի գրասենյակապետը և շնորհագրեր տվողը ասում էր.

— Ես մարդը չեմ կրնա մոռանա մեր գրասենյակի դուռը: Նրա մարգարեյությունը Եդիսոնն արդարացրեց, ի հարկե: Հետաքրքիր էր և Եդիսոնի աշխատանոցը:

Մի մեծ դահլիճ էր 100 վոտնաչափ յերկարությամբ և 30 վոտնաչափ լայնությամբ, կահավորված ընտիր մեքենաներով ու քործիքներով, գեղեցիկ ու հարուստ զբաղարանով:

Նրա ոգնականներից ամենահայտնին անգլիացի՝ Չարլզ Բեշլորն էր, վորը 1870 թվից Եդիսոնի հետ միասին էր աշխատում. դա մեծ գիտնական էր և տեխնիկ:

Նրա ոգնականների մեջ ընդունակ ու շնորհալի մարդիկ շատ կային, վորոնք կարող էին ինքնուրույն կերպով իրենց համար լայն ասպարեզ ստեղծել, բայց չէին անում, գերադասելով աշխատել իրենց հանձարեղ ընկերոջ դեկավարությամբ:

Մենլո-Պարկը կողմնակի մարդկանց համար փակ էր, խիստ հսկողության տակ. իսկ ժողովրդի մեջ՝ բերնե բերան առասպելներ էր տարածվում արհեստանոցում կատարվող խորհրդավոր հրաշքների մասին: Թերթերում հողվածներ էին լույս տեսնում «Մենլո-Պարկի կախարդի» մասին, և Եդիսոնի աշխատանոցի վրա նայում էին, վորպես մի կախարդանոցի վրա, ուր բնության հին որենքները փոխվում են նորերով:

Հեքյաթային արագությամբ մի գյուտը հաջորդում էր մյուսին Եդիսոնի Մենլո-Պարկում անց կացրած տասը տարվա ընթացքում: Նրա արած գյուտերի լուրը տարածվել էր աշխարհի ծայրերը: Հեռագրաթելերը նրա գովքն էին յերգում, ելեքտրա-

կան շոգեգնացքները նրա փառքը տարածում, իսկ ձայնագրերը (ֆոնոգրաֆները) մարդկային ձայնով նրա անունն ելին տալիս աշխարհի բոլոր անկյուններում:

Ամեն մի նոր համաշխարհային ցուցահանդես Եդիսոնի նոր գյուլտով եր գարմացնում աշխարհը: Են բաժինը, ուր դրված ելին սքանչելի մեքենաներն ու ելեքտրական ապպարատները, որ որի լայնանում ու լայնանում եր:

1869 թվի պատանին, ամենքին անհայտ ու անծանոթ հեռագրատան հասարակ ծառայողը, վոր առանց կոպեկի թափառում եր Նյու-Յորքի փողոցները, ուր ծաղրում ելին նրան, ծիծաղում նրա խիզախ ծրագրների վրա ու դուռը ցույց տալիս՝ ճամփու դնում, նա վոր գլուխը դնելու տեղ չուներ, ուտելու որվա հաց, հիմա, տասը տարուց հետո, ամբողջ աշխարհին հայտնի գյուլտ անողներից ե, աշխարհի ամենամեծ աշխատանոցի տերը, հանճար, վորի ձեռքի տակ աշխատելը պատիվ են համարում իրենց համար հայտնի գիտնականները:

Յերբ մտածում ես նրա կյանքի վրա, առաջին հայացքից թվում ե, թե նա են չեզակի բաղդավորներից ե, վորոնց կյանքում միշտ ժպտում ե բաղդը, վորը փակ աչքերով մեկից մյուսին ե անցնում:

Բայց եսպես չեր: Եդիսոնը չերջանիկ Ալադինը չեր, վորի ձեռքը խնձորները չերկնքից ելին թափվում. եդպես չեր Եդիսոնի կյանքը. նա քայլ առ քայլ կովելով բոլոր դժվարությունների դեմ, աշխատելով ե ու պայքարով ձեռք բերել իր դիրքը: Ամեն մի նոր գյուլտ նրան հարյուր անհաջող փորձ ե նստել, անհանգիստ որեր, անքուն գիշերներ, հաճախ ամիսներ՝ զրրկանքներով ու աշխատանքով լիքը, և չնայած ես ամենին, նա իրեն գործը կիսատ չեր թողնում, չեր վհատում, այլ տանում եր մինչև վերջը, մինչև իր նպատակին հասնելը: Իր նպատակներն իրագործելու համար, նա ոգտվում եր ամեն առիթից ու հանգամանքից. նրա համար գոյություն չուներ վոչ մի անհաղթելի դժվարություն և վոչ ել վորևե անկարելիություն:

Վերջնական նպատակին հասնելու համար նա համառորեն աշխատում եր ու պայքարում:

Հետևյալ գլուխներում, Եդիսոնի հետ միասին կանցնենք նրա են փշոտ ուղին, վորը տասը տարվա ընթացքում նրան մեծ փառքի ու չերջանկության հանցրեց:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Յ Ե Վ Հ Ե Ռ Ա Խ Ո Ս

Եղիստնի գործունեությունը ճիշտ գնահատելու համար, պետք է հիշել, վոր նա հետազոտող գիտնականներից չէ, այլ նախ և առաջ գործնական գյուտարար:

Նա նյութտոնի, Ֆարադեյի կամ Հելմհոլցի նման նոր որենքներ ստեղծելու վրա չէր աշխատում. վոչ, այլ նա ուզում էր գիտությունը հայտնի որենքները կիրառել կյանքի նկատմամբ. գտնել են, ինչ վոր կարող է եսոր պետք գալ մարդուն իր գործնական կյանքում:

Նա ինքը, մի անգամ, իր գործունեության մասին եսպես է արտահայտվել.

«Շատերն են ուզում ինձ գիտություն մարդ դարձնել-գիտնական, բայց ի գուր: Յես բնություն որենքները չեմ ուսումնասիրում, և մինչև եսոր դեռ վոչ մի նոր որենք չեմ բացել: Յես գերազանցորեն գյուտ անող եմ, թերևս կարելի չէր ինձ գիտական-գյուտարար անվանել, հակառակ գյուտարար արհեստավորների, թեև այդ տեսակ հակադրությունն էլ անիմաստ բան է, վորովհետև արհեստավոր-գյուտարար չկա»:

Բայց եդ ամենևին չէր նսեմացնում Եղիստնի նշանակությունը: Մեկը, վոր գիտության բոլոր գյուտերը կիրառում է մեր առօրյա կյանքի նկատմամբ, հանգիստ խղճով կարող է իրեն գիտնականներից պակաս տեղ չտալ, վորոնք միայն տեսություններով են պարասպում:

Եղիստնը, ճիշտ է, նոր բան շատ չի գտել—հայտնաբերել, բայց հենց շատ բան է կատարելագործել: Են, ինչ վոր մինչև Եղիստնը դատարկ բան էր, կամ գիտական թեթև խաղալիք, այժմ մարդկանց կյանքում հսկայական դեր է խաղում:


Վորպես ելեքտրոտեխնիկի՝ Եղիստնին մինչև հիմա վոչ վոք դեռ չի գերազանցել:

Սկզբում նա ամբողջովին նվիրվեց հեռագրի ուսումնասիրութեանը: Նա ուզում էր հեռագիրը հնար չեղածին չափ ոգտակար դարձնել ժողովրդի արդյունաբերութեանը: Եղ աշխարհում հեռագիրը շատ է պետք չեկել և շատ հաճախ:

Կյանքում որ-որի հեռագրի պահանջն ավելի զորեղ էր զգացվում, պետք էր բավարարել եղ պահանջը և վորևէ ձեւով լուծել խնդիրը:

Բայց ի՞նչպէս:

Յերկու ճանապարհ կար: Մեկը՝ մի հեռագրաթելով միաժամանակ մի բանի հեռագիր ուղարկելն էր, մյուսը՝ հեռագրե-



լու արագութեանն ավելացնելը:

Առաջին ճանապարհը եղիստնին դեռ վաղ պատանեկութեանից էր հետաքրքրել, թեև նրա առաջին փորձերն եղ ուղղութեամբ անհաջող անցան. բայց նա չերբեք չհուսահատվեց և վոչ էլ գործի վերջնական հաղթանակի հավատը կորցրեց: Դեռ ավելին. նա դրանով չէր բավարարվում, վոր միաժամանակ չերկու հեռագիր տա, այլ շորսը, ամեն ծայրից չերկուսը. դրա համար պետք էր դեռ նոր ապագարատ ստեղծել կվադրուպլենս ապագարատը:\*)

\*) Կվադրուպլենսն էն ապագարատն է, վորով կարելի յե միաժամանակ չորս հեռագիր տալ. ութ հեռագիր կարելի յե տալ ուստուպլենսով, յեթե աշխարհին լինել:

Նա վեց տարի աներևակայելի համառությամբ աշխատում է եղ բանի վրա և վերջապես, 1874 թվին կարողանում է արտոնագիրը — պատենտը ստանալ:

Եղ ապալարատը շատ եր բարդ, և վրան աշխատելու համար ահագին գիտություն էր պահանջվում: Եղիսոնն ութ մարդ ջոկեց, վորոնք իր ոգնությամբ ուսումնասիրեցին եղ ապալարատի վրա աշխատելու չեղանակը: Եղ մարդկանց ոգնությամբ Եղիսոնը Նյու-Յորքից Բոստոն գիծ անցկացրեց և եղ գիծը հենց սկզբից անասելի բարձրության վրա դրեց:

Եղիսոնն ավելին արեց, քան են ժամանակվա հայտնի ելեքտրոտեխնիկները, ինչպես, որինակ՝ Բերլինում, Սիմենս չեղբայրները, վորոնք տասնյակ տարիներ զուր աշխատում էին հեռագրի վրա ու չէին կարողանում: Սմերիկյան հեռագրական մեծ ընկերությունը՝ «Western Union»-ն իսկույն իրենց մոտ եղ նոր հեռագիրը մտցրեց, և են ժամանակվանից շնորհիվ նոր հեռագրի, ամեն տարի 1,200,000 ուրբլի չե տնտեսում:

Բայց Եղիսոնն Եղիսոն չեր լինի, յեթե բավարարվեր յեղածով:

Նա շարունակ նոր միջոցներ եր փնտրում՝ միաժամանակ ութ հեռագիր տալու համար: Բայց նա տեխնիքական են տեսակ դժվարությունների հանդիպեց, վոր մինչև հիմա եղ հարցը գեռ բաց է մնում:

Բայց Եղիսոնը «հետաձգածը չի մոռանում» և ոկտոպլեքսի միտքը չի թողնում, գուցե մի գեղեցիկ որ իր նոր գյուտով աշխարհը զարմացնի:


Մյուս խնդիրը, վոր զբաղեցնում եր Եղիսոնին, հեռագրելու արագությունն ավելացնելու խնդիրն եր այդ եստեղ ել Եղիսոնը հաղթանակը տարավ: Նա մի ավտոմատիկ ապալարատ հնարեց, վորի ոգնությամբ հեռագրներ ելին ուղարկում Նյու-Յորքից Վաշինգտոն, այսինքն 350 կիլոմետր տարածության վրա մի րոպեյում 1000 խոսք հեռագրելու արագությամբ:

Հեռագրի վերաբերյալ նա շատ գյուտեր է արել ու շատ կատարելագործություններ հանդես բերել: Յեթե խորանալու լինենք եղ աշխարհը, կրտեսներք, վոր առանց Եղիսոնի մասնակցության՝ վոչինչ չի արվել: Դրա մասին ահագին հատոր-

ներ կարելի յե գրել: Բայց մենք կանգ կառնենք մի գյուտի վրա, վորը մոտ կապ ունի հեռագրին, գնացից հեռագրելն ե այդ՝ նրա արագ ընթացի ժամանակ:

Մեզ, վոր արդեն ծանոթ ենք Մարկոնյան անթել հեռագրին, ենքան ել զարմանալի չի թվա այդ, բայց են ժամանակ, յերբ Եդիսոնը նոր եր այդ գործով պարապում, նույնիսկ նրա մոտիկ ոգնականները կասկածանքով ելին նայում ու գլուխները թափ տալի: Բայց Եդիսոնի համար այդ ամենահեշտ գործերից եր, վորոնցով նա յերբևե զբաղվել ե:

Գնացքում գտնվող ապապարատից ողի միջոցով ելեքտրական հոսանքը գնում եր հեռագրաթելերին, վորոնք յերկաթուղագծին զուգահեռ ելին: Թեև գիտության տեսակետից, առանձին վոչինչ չկար եստեղ, բայց և այնպես զընացքից հեռագրելը հետաքրքիր յերեվույթներից ե:



Բացի հեռագիրը, հեռախոսն ել ե շատ պարտական Եդիսոնին: Մինչև 1876 թիվը հեռախոսը գիտնականների համար միայն զբաղմունքի առարկա յեր. եդ թվին Եդիսոնի հայրենակից Գրահամ Բելլը կատարելագործում ե, և առորյա կյանքում սկսում են գործադրել, բայց միայն փոքր տարածության վրա, վորովհետև Բելլյան հեռախոսը ձայնը լավ եր ընդունում, բայց վատ հաղորդում: Ելեքտրական հոսանքը մարդու ձայնի ոգնությամբ ելին առաջ բերում. և դրա համար ել մեծ տարածության վրա խոսելիս, անհնար եր լինում են աստիճանի բարձրացնել ձայնը, վոր մյուս ձայրին լսելի լինի: Նույնիսկ թնդանոթի պայթյունի ույժը քիչ եր դրա համար: Բնական ե, վոր եդ տեսակ ապապարատը շատ եր անհարմար:

Յերկու տարվա համառ աշխատանքից հետ, Եդիսոնին հաջողվում ե լրացնել եդ պակասը, շինելով ձայն առաքող մի մե-

քենա, վոր իր կառուցվածքով նման է մեր այժմյան հեռախոսին:

Եղիսոնը հեռախոսի վրա աշխատելու ժամանակ մի շարք նոր գյուտեր է անում, վորոնցից մի քանիսի վրա մենք կանգ կառնենք:

Նախ և առաջ նա հնարում է միկրոֆոնը, վորը մի շատ զգայուն ապարատ է և հեռախոսի թելով անցնող ձայնը սարսափելի ուժեղացնում է: Ժամացույցի ձայնը, շնորհիվ միկրոֆոնի կարելի չէ 200 կիլոմետր տարածության վրա լսել: Ճանճի բզրզոցը գորթի քայլվածքի նման լսվում է:

Նույն ձևով նա մի ապարատ է հնարում ողի բարեփոխության փոփոխությունը չափելու համար, վորը միկրո-սուսիվեստ է կոչվում:

Առաջին անգամ իր եղ նոր ապարատը փորձում է արևի լրիվ խավարման ժամանակ Ռեյլինգում—Վոյմինգ նահանգում:

Յերբ եղ փորձի համար դաշտը դուրս գալիս լավ տեղերն արդեն բռնված էին, նա ստիպված մի հին հավանոցի վրա յե սարքվում: Որը քամի յեր և հավանոցն սկսում է տարուբերվել, որորվել, ինչպես շոգենավը ծովի վրա. մինչդեռ փորձի հաջողության համար անհրաժեշտ էր, վոր գործիքն անշարժ ամրացրված լիներ:

Եղիսոնը հավանոցն ամրացնում է, բայց քամին մյուս կողմից փչում է ու հավանոցի հետ գործիքն էլ շարժում: հուսահատված՝ ուզում է թողնել ու հեռանալ, յերբ հանկարծ խավարումից առաջ, քամին մի կարճ ժամանակ դադարում է և տասնմետրն սկսում է աշխատել. եղ ապարատը ցույց է տալիս, վոր արևի պսակը 15 անգամ ավելի ջերմություն է տալիս, քան Արկտուր աստղը, վորը Եղիսոնը դրա նախընթաց դիշերն էր դիտել:

● Թե ինչ հեշտությամբ էր Եղիսոնը ելեքտրականությունը գործադրում կյանքի առօրյա պահանջների համար, եղ յերևում է նրա ելեքտրական գրչից:

Նյու-Յյորքի գրողներից մեկը մի անգամ գանգատվում է Եղիսոնին, վոր ահագին ժամանակ է գնում գրելու պրոցեսսի

վրա, և հարցնում ե, թե ինչո՞ւ մեր ժամանակն ու աշխատանքը խնայող մի գործիք չեք հնարում:

— Յես կրփորձեմ, — պատասխանում ե Եղիստնը:

Յե՛վ մյուս անգամ, յերբ հանդիպում ե եդ նույն գրողին, Եղիստնը նրա ձեռքը մի գրիչ ե տալիս, վորն առաջադրած խնդիրը հետևյալ ձևով եր լուծում:

Գրիչը խրելու տեղը ներսից դատարկ ե և նրա միջով անցնում ե մի պողպատե շարժական առանցք, վորը վերևից ունի ելեքտրական փոքրիկ մոտոր, իսկ ներքևից վերջանում ե լեզվակով: Յերբ այդ գրիչն անց են կացնում թղթի վրայով, լեզվակը նրա վրա բազմաթիվ փոքրիկ ծակեր ե առաջացնում՝ այնքան իրար մոտեմոտ, վոր հասարակ աչքով նայելիս գիծ ե յերևում:

Այդպես ծակծկված թղթի տակ դնում են մի թերթ մաքուր թուղթ, սեպրած գլանն անց են կացնում վերի թղթի վրայով և այդպիսով ստանում գրածի պարզ ու մաքուր արտատպուլթյունը: Այս ձևով կարելի յե հազարից ավելի պատճեններ ստանալ:

Եղիստնը շուտով կատարելագործեց այդ գրիչը և արտատպուլթմաների քանակը չերկու հազարի հասցրեց:

ԶԱՅՆԱԳԻՐ — ՖՈՆՈԳՐԱՑ

Եղիստինն ժողովրդականացնողը, նրա անունը հռչակողը ձայնագիրն էր.— ֆոնոգրաֆը:

Զայնագիր ստեղծելու գաղափարն առաջին անգամ հղացել է լուսանկարչական ապպարատի գյուտից անմիջապես հետո:

Անգլիական թերթերից մեկում, 1839 թվին, գրած էր հետևյալը.

«Մենք հիմա գիտենք են տեսակ թուղթ պատրաստել, վորի վրա մեր տեսածը պահպանվում, մնում է. կարո՞ղ է, արդյոք, գա այնպիսի մի որ՝ են տեսակ թուղթ պատրաստենք, վոր մեր լսածը կրկնի»:

Եղ միտքը շատերին է զբաղեցրել, շատերն են մտածել եղ գյուտի վրա:

Մորուան, փոթորկի և քամու որենքների հետախուզողը, իր նամակներից մեկում գրում է.

«Ափսո՛ս, վոր Դագերը<sup>\*</sup>) լուսանկարչական ապպարատի տեղ, են տեսակ բան չի գտել, վորի ոգնությամբ կարելի լիներ լսածը թղթի վրա գրել ու հետո նորից վերարտադրել»:


Զարմանալի յեր, թե Եղիստինն ինչքան քիչ բան էր հարկավոր, վոր նա իսկույն ուղիղ ճանապարհի վրա ընկներ, իրեն գտներ և նոր բան ստեղծեր: Եղ բանը շատ ուժեղ յերեւոյց ձայնագրի գյուտի ժամանակ: Մի փոքրիկ կայծ անմիջապես բռնկում էր նրա վառ յերեակայությունը, և նա ամբողջ ուշիսարհ էր ստեղծում, արեգակնային համակարգություն կազմում:

Մի որ Եղիստինը, կանգնած հեռախոսի մոտ, իրեն համար յերգ էր մոմոում. հանկարծ նկատում է, վոր մե փոքրիկ մեխ

<sup>\*</sup>) Լուի Դագեր՝ լուսանկարչական ապպարատի հնարողը:

չանգոում ե ձեռքը, նա փորձը կրկնում ե—նորից չանգ-  
ոում ե:

Եղիսոնի գլխում անմիջապես նոր մտքեր են փայլում: Յե-  
թե հնարավոր լիներ՝ եղ տեսակ մեխը գրի առնելը մարդու  
ձայնը, են ժամանակ կարելի յեր յերկրորդ անգամ եղ հետքով  
անցնելով վերարտադրել բոլոր ձայները ճշտությամբ, և եղպի-  
սով կարելի յեր խոսող մեքենա ստեղծել:



Եղ միտքն Եղիսոնին այլևս հան-  
գիստ չի տալիս: Նա առաջ փորձ ե  
անում հեռագրների համար գործադրող  
թղթի վրա. հեռախոսով կանչում ե «ալ-  
լո». փոքրիկ մեխը թղթի վրա հետքեր  
ե թողնում. և յերբ Եղիսոնը թողած  
հետքերով թուղթն անց ե կացնում  
փոքրիկ մեխի տակով, նա պարզ մի

թույլ ձայն ե լսում՝ «ալլո»:

Այլևս վոչ մի կասկած չկար. նա առանց ժամանակ կորց-  
նելու, իրեն հատուկ արագությամբ, անմիջապես ծրագրում ե  
և մշակում ձայնագրի նախագիծը և իր ոգնականներին ու  
ու բանվորներին տալիս, վորպեսզի պատրաստեն:

Յերբ նա բացատրում ե խոսող մեքենայի մասին, ամեն-  
քը նրան մեծ թերահավատությամբ են լսում:

Նույնիսկ Չարլզ Բեշլորը, վորը միշտ հավատում եր Եղի-  
սոնին, ես անգամ գլուխը թափ ե տալիս, կասկածանքով ա-  
սում:

— Յես մի տակառ խնձորի վրա գրադ եմ գալի. դիտեմ,  
ձեր ես գործը վոչ մի հաջողություն չի կարող ունենալ:

— Գրադ գանք, — ծիծաղելով համաձայնվում ե Եղիսոնը:  
Յեվ իր ոգնականներից մեկին՝ կրեյսսին հանձնարարում ե  
պատրաստել նոր ապալարատի կաղապարը. և մի գեղեցիկ ու  
կրեյսսին նոր ապալարատը ձեռին յերևում ե Եղիսոնին:

Ինքը, կրեյսսին ել եր մեծ կասկածով վերաբերում Եղի-  
սոնի նոր գյուտին. մեքենան զնելով Եղիսոնի առաջ, չի կարո-  
ղանում զսպել իր հեզնանքը:


— Ահա ձեր խոսող մեքենան:

Եղիստոնը նաչեց մեքենային, հետո մի նախադասութիւն ասաց, իսկ ներկան յեղողները լարված ուշադրութեամբ նայում էին:

— Հիմա ձայնագրի հերթն է, — ասում է Եղիստոնը:

Ճիշտ վոր, մի վայրկյանից հետո լսվում է Եղիստոնի ասած բառերը, թեև թույլ, բայց պարզ ու ճիշտ: Կրեյսսին ապշած Եղիստոնին է նայում, իսկ Եղիստոնն ուրախութիւնից և հուզմունքից բոլորովին գունատվում է:

Եղիստոնը հետո պատմում էր, վոր իր արած գյուտերի ժամանակ յերբեք ենպես չի հուզվել, ինչպես ձայնախոսի ժամանակ, յերբ առաջին անգամ, ինքն իր ականջով լսում է իր



ձայնը: Իսկ Բեշլորից տարած խնձորներն ամենաթանկ հաղթանակն են համարում, մի պատիվ, վորին արժանացել են յերբևե իր գյուտերը:

Ես գյուտը Եղիստոնն արել 1877 թվին. ինքն եսպես էր պատմում իր նոր մեքենայի մասին. —

«Նա վոչ լեզու ունի, վոչ շուրթեր, վոչ կոկորդ, վոչ էլ ձայնալարեր: Նա կյանքից ու ձայնից դուրկ, անշունչ մի բան է, բայց նմանվելով քո ձայնին՝ խոսում է քեզ նման, կրկնում է քո խոսքերը, և քո մահվանից դարեր հետո, նա ընդունակ է քո հեռավոր ժառանգների մեկի առաջ կրկնելու քո խոսքերը, քո ասած մտքերն ու գաղափարները»...

Բայց եղ նոր մեքենան կատարելագործվելու մեծ կարիք

ուններ դեռ. նա նման էր փոքրիկ թըռթուվոր յերեխայի, վոր նոր եր սկսում խոսել, բառերը պարզ չեր արտասանում, հընչյուռնները՝ լրիվ ու վորոշ:

Նախ և առաջ, հնչյուռնները գրի առնելու համար հարկավոր եր համապատասխան նյութ գտնել: Սկզբում ոգտվում եր առանձին տեսակի պատրաստած թղթից, հետո եղ փոխարինեց անագե թիթեղներով, մինչև վոր վերջապես գտավ մոմե բարդ կազմության գլանները: Իր գյուտն եր եղ, և գյուտերի մեջ միակ կառուցվածքն է, վորի կազմը գաղտնի յե պահում բոլորից: Իսկ մնացած բաների համար նրա աշխատանոցը բաց ե ամենքի առաջ, և բոլոր տեխնիկներն ու ինժեներները միշտ ազատ կարող են գնալ հարցնել ու ծանոթանալ:


Շատ ե չարչարվել նաև ձայները գլանների վրա գրող լավ քարեգրչի գյուտի համար, սկզբում պողպատե հասարակ գրչով եր ոգտվում, իսկ հետո՝ նուրբ, սրածայր շափյուղայով:

Ամբողջ տասը տարի անդադար աշխատում եր ձայնագիրը կատարելագործելու վրա. կարելի յե ասել, վոր Եդիսոնն ենպես եր կրթում իր ձայնագիրը, ինչպես մայրն իր սիրած յերեխային: Ձայնագիրը մի ծուլ ու կամակոր յերեխա չեր. և շնորհիվ Եդիսոնի կամբի, անգուլ աշխատանքի և հետևողական բնավորության, յերեխան զարգանում ե ու կատարելագործվում: Նա մեռած անշուշ զանգվածից՝ իր ուզածն ե ստեղծում, և մի գեղեցիկ որ իր «կատարելագործված յերեխային» ուղարկում ե աշխարհի ծայրերը՝ զարմացնելու հին աշխարհը:

Եդիսոնի նոր ստեղծագործություռնն առաջին անգամ ցուցադրում են 1888 թվին՝ Լոնդոնում, Բյուրեղյա պալատում:

Առաջին անգամ, եղ որը ձայնագիրը Լոնդոնի մամուլի ներկայացուցիչների առաջ մի ճառ ե արտասանում, հետո՝ մի պոյեմ, իսկ վերջը ոպերայից մի քանի կտոր յերգում: Ինքը, Եդիսոնը եղ որն Ամերիկայումն եր, բայց շնորհիվ իր ձայնագրի, ինքն ել մի ճառ ե ասում:

1889 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսին, ձայնագիրը կենտրոնական տեղն եր գրավում. նա ցուցահանդեսի առանցքն եր. որը 30,000 մարդ եր այցելում են բաժինը, ուր 45 ձայնախոս եր դրված, վորոնք խոսում եին բոլոր կուլյտու-



րական լեզուներով. «Բարեւոյնյան խառնաշփոթութիւն» եր  
այդ:

Փարիզից ձայնախոսը պտըտվում է յերկրե յերկիր, և ա-  
մեն տեղ մեծ վոգևորությամբ են ընդունում: Եղիսոնի արած  
գյուտերից և վոչ մեկը եղ չափ մեծ հետաքրքրութիւն առաջ  
չեր բերել, ինչպես ձայնագիրը: Յեվ ինքը՝ Եղիսոնն ել մի  
առանձին վերաբերմունք եր ցույց տալիս դեպի ես նոր  
գյուտը:

Առհասարակ, վորևէ գյուտից հետո, յերբ աշխատանքը  
վերջացնում եր և ուղարկում եր աշխարհի զանազան կողմերը  
տարածելու, նա այլևս նրան չեր վերադառնում և չեր ել սի-  
րում հիշել, տհաճությամբ եր հիշում: Եղպես չեր Փոնոգրաֆը  
նրա համար. նա մնաց Եղիսոնի սիրելին, իր մշտական ուղե-  
կիցը, և են կարծիքի յեր, վոր նրան շատ մեծ ապագա յե  
սպասում:

Նրա առաջ մեծ հեռանկար եր բացվում. շնորհիվ ձայնա-  
խոսի, այլևս կարիք չի լինի սղագրության, վոչ ել նամակ գրելու.  
գրելու փոխարեն կասեն, կըթելադրեն, իսկ հետո գլանները  
հասցեյագրած փոստով կուղարկեն՝ ում հարկն է: Ոտար լեզու-  
ներ սովորելու համար, նույնպես կարող ե լավ ուսուցիչ լինել:  
Բոլոր համերգներն ու յերաժշտական գործերը կարելի յե լսել  
ձայնագրերի միջոցով. հետո, կույրերի համար, կարող են տպած  
գրքերի փոխարինել:

Կարող են պահվել ու պահպանվել բոլոր են ճառերը, վո-  
րոնք պետական, քաղաքական կամ հասարակական նշանակու-  
թիւն ունեն:

Մի խոսքով, եսպես թվելով՝ Եղիսոնի բոլոր հնարավորու-  
թիւնները սահման չունեն:

Շատ հաճախ, մեծ գյուտերին միշտ փոքր գյուտեր են  
հաջորդում:

Նա նույնպես մի ապպարատ պատրաստեց, վորը կոչվում  
է մեգաֆոն:

Յերեք վոսնաչափ բարձրության վրա յերկու ձագառ են  
դնում, վորոնց սուր կողմերը կաուչուկի ոգնությամբ միաց-  
նում են լսողի ականջին:

Մեզաֆոնն ենքան ե ուժեղացնում ձայնը, վոր մեկ մղոն տարածության վրա կարելի յե խոսել ու լսել:

Մյուս ապարատը, վորն ավելի յե ուժեղացնում հնչյունը, մոտ 200 անգամ, աերոֆոն ե կոչվում: Ես ապարատով կարելի յե լսել առանց ռետինե (կաուչուկի) խողովակների. ես ապարատով շատ են ոգտվում ծովագնացները փոթորիկի ժամանակ:

Վերջին չերկու գյուտը գործածության մեջ դեռ չեն մտել: Բայց դրանք ցույց են տալիս Եդիսոնի հանճարի բեղմնավորությունը և նրա գյուտ անելու շնորհքի, ընդունակությունների սահմանները:

Նրա մտքից վոչ մեկն անհետ չեր կորչում, անհետևանք չեր մնում: Նա միշտ գործադրում եր, իրականացնում և միշտ մի բան ստեղծում կյանքի համար:

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԼԱՄՊԸ

Յերկու տեսակի ելեքտրական լույս գոյություն ունի՝ վոլտյան աղեղ և շիկացման լամպ: Ես անունները մեզ դադափար են տալիս նրանց տարբեր հատկությունների մասին: Աղեղ լույսը մենք են ժամանակ ենք ստանում, յերբ ելեքտրական հոսանքը մի ծայրից մյուս ծայրն է անցնում. հաղորդիչը եստեղ ողն է լինում: Իսկ շիկացող լույսը ստանում ենք են ժամանակ, յերբ ելեքտրական հոսանքն անցնում է նուրբ, բարակ թելի (լարի) միջով, վորը շիկանում և լուսավորում է:

Վոլտյան աղեղի լույսը շլացնելու աստիճան սպիտակ է, և գործ է ածվում փողոցները, հասարակական վայրերն ու մեծ սրահները լուսավորելու համար: Իսկ ելեքտրական լույսը նրման է լամպի լույսին և լամպին էլ փոխարինում է:

Յերկար տարիներ Հին ու Նոր աշխարհների բոլոր ելեքտրոտեխնիկներն են յերկու տեսակի լույսի վրա շատ փորձեր են արել, և են ժամանակ, յերբ 19-րդ դարի սկզբներին վոլտյան աղեղի լույսը մեծ ընդունելություն էր գտել, և արդեն սկսել էր գաղն ասպարեզից վանել, շիկացման լամպը դեռ շատ էր յետ մնացել:

Գիտնականներն ու գյուլտարարները շատ են աշխատել ելեքտրական հոսանքի համար են տեսակ հաղորդիչ գտնել, վոր առանց փշրվելու կարողանար դիմանալ շիկանալուն:

Սկզբում մեծ հույսեր ելին դնում մետաղե լարի վրա, բայց մի շարք փորձերից հետո, համոզվեցին, վոր նրանք շիկանալուց հետո, հալվում են:

Ռուս և Ֆրանսիացի գիտնականները փորձ էլին անում ածուխե լարի հետ. լարը դնելով ասպակյա անող կափարիչի տակ: Եղ փորձը են նշանակությունն ունեցավ, ուր հետագա բոլոր հետախուզումներին նոր ուղղություն տվեց և ելեքտրա-

կան լուսավորութեան խնդիրն ավելի ուղիղ ճանապարհի վրա դրեց: Բայց ածուխից բարակ լար պատրաստելն ենքան եր դժվար, նույնիսկ անհնար, վոր եղ փորձերը միայն գիտական շահեկանութուն ունեցան:

Փորձնական կյանքում ելեքտրո-տեխնիկները դիմում եյին են տեսակ մետաղների, ինչպիսին են՝ պլատինը կամ իրիդիումը, վորոնք դժվար են հալվում:

Եսպես եր իրերի դրութունը, յերբ 1877 թվին Եդիսոնը գործի անցավ:

Սկզբում նա պլատինի լարը փորձեց, բայց շուտով համոզվեց, վոր անպետք է այն:

Խնդիրն այն եր, վոր են տեսակ ածխե ձող գրտնեն, վոր առանց փշրվելու՝ շիկանալուն դիմանար: Փորձեցին ամեն բան, ինչ վոր կարող եր ածխանալ—մետաղներ, լարեր, վորոնք հագենում եյին քարածխի ձյութով, նույնիսկ փայտն ու բույսերը:

Գիշեր-ցերեկ աշխատանքը յեռում եր:

Եդպես անց կացավ մի ամբողջ տարի, մինչև վոր Եդիսոնը պատրաստեց ելեքտրական լամպը, վոր ամբողջ 48 ժամ վառվում եր:

Վոչ Եդիսոնը, վոչ ել նրա ընկեր Բեշուորը յերբեք չեն մոռանա են հեռագիրը՝ հոկտեմբերի 17—25-ը, վոր առանց մի վայրկյան աշխատանքը դադարացնելու, պատրաստում եյին ածխացրած բամբակե լարը:

Հենց վոր պատրաստում եյին լարն ու հանում ապալարատից, իսկույն փշրվում եր, փոշի դառնում, վոչնչանում. և ամեն մի եղ տեսակ անհաջող փորձ պահանջում եր մի քանի ժամվա լարված աշխատանք:


Վերջապես, յերկար աշխատանքից հետո, հոկտեմբերի 18-ին հաջողվում է նրանց ապալարատի միջից ամբողջ մնացած մի լար հանել, բայց հենց վոր ուզում են ամրացնել ելեքտրական հաղորդիչներին, իսկույն նորից փշրվում է:

Հոգնած ու ջղայնացած, ձեռները թուլացած, կանգնել եյին շվար իրենց աշխատանքի փշրված պտուղների առաջ: Բայց

Նրանցից վոչ մեկը աշխատանքը կհաստ թողնելու մասին չեր մտածում:

— Դու, կարծում եմ, համաձայն կըլինես ինձ հետ միասին շարունակել աշխատանքը, մինչև ելեքտրական լամպ ստանալը, — դիմեց Եղիստենն իր ընկերոջը:

— Ի հարկե, — պատասխանեց Բեչլորը, և աշխատանքը նորից շարունակեցին: Ես անգամ սկսեցին նոր ձևով աշխատել, բայց



ածխի լարերին հենց վոր մոտենում եյին, նորից փշրվում եյին:

Նրանց համբերո թյունը վերջիվերջո կըհատներ, յեթե վերջապես հոկտ. 20-ին, առավոտը վաղ նրանց շհաջողվեր ամբողջական ածխի լար ստանալ և ամրացնել ելեքտրական հաղորդչին: Բեչլորն ուրախացած վերցրեց, վոր արհեստանոց տանի, ուր ապակե զնդեր եյին դտնվում: Բայց, բակովն անցնելու ժամանակ, հանկարծ սաստիկ քամի բարձրացավ, և ածխե ձո-

ղը ջարդ ու փշուր յեղավ: Բեշլորը կատաղած ել չգիտեր, ի՞նչ աներ: Ընկավ Եղիստնի վրա ու հուսահատված բացականչեց.

— Չե՛, չես այլևս չեմ ուզում... Չորս որ ու գիշեր վոչ քնել եմ, վոչ ել բան կերել... և հիմա մենք նորից կուտրած տաշտակի առաջն ենք... Ել չեմ կարող դիմանալ... չեմ ուզում ու չեմ հավատում ելեքտրական լամպաներին:

Եղիստնի վրա յել եր ազդել եղ անհաջողութունը. նա յել եր հուսահատված, բայց նա ցույց չտվեց, տեսնելով ընկերուջը տաքացած. նա շատ հանգիստ տղնով, վորին ընդունակ եր նա, ասաց.

— Ի՞նչ ելավ քեզ, այ պառավ. ինչպես յերևում ե, քե-  
Փրդ լավ չի. ճիշտ ե, ուրախանալու առանձին քան շունենք, բայց մենք մեր աշխատանքը կըշարունակենք, մինչև վոր ելեք-  
տրական լամպաներ ստանանք. կարծում եմ ինձ հետ համա-  
կարծիք կըլինես, չե՛, իմ ընկեր:

Բեշլորը չեր կարող իր ուսուցչին դավաճանել, իր ընկե-  
րոջը մենակ թողնել. և նորից առանց հանգստանալու նրանք  
շարունակում են իրենց աշխատանքը, և մյուս որը, վերջապես  
հասնում են իրենց նպատակին:

Գտնելով իրենց ուզածը, Եղիստնն ու Բեշլորը վճռեցին  
հանգստանալ. գնում են քնելու, իսկ ես ժամանակ նոր լամ-  
պը թողնում են իրենց ոգնականների հսկողության տակ, վո-  
րոնք մեծ ուշադրությամբ հետևում են վառվելուն:

Յերբ Եղիստնը զարթնում ե, իսկույն աշխատանոցն ե վա-  
զում տեսնելու իր նոր լամպը, վորն այրվում եր ամբողջ 48  
ժամ, ավելի, քան կարծում եր Եղիստնը:

Եղ գյուտից հետո, Եղիստնը Բեշլորի հետ միասին շատ ե-  
լին հիշում են սարսափելի հինգ որը, վոր ելեքտրական լամպի  
ծննդյան յերկունքի որբեր եյին անվանել:

Հենց եղ նույն տարին Եղիստնը «Կոլումբիա» մեծ շոգե-  
նավին տվեց 115 ելեքտրական լամպ, իսկ իր աշխատանոցում  
ելեքտրական լուսավորությունն անց կացրեց—և սրա համար  
700 ելեքտրական լամպ պատրաստել տվեց:

Միացյալ Նահանգների բոլոր ծայրերից գալիս եյին նրա աշխատանոցը տեսնելու եղ հրաշագործ լամպաները:

Նյու-Յորքից և Ֆիլադելֆիայից հատուկ գնացքներ եյին ուղարկուած, իսկ Ամերիկյան թերթերը լիքն եյին ամեն տեսակի պատմություններով Եդիսոնյան նոր լամպաների մասին:

Ամբողջ Ամերիկան, իսկ հետո և ամբողջ Յեվրոպան նորից մի մարդու մասին եր խոսուած—և եղ մարդը Եդիսոնն եր:

Իսկ Եդիսոնն եղ ժամանակ իր աշխատանոցում հանգիստ նստած՝ նոր նյութեր եր փնտրուած ածխե լարերի համար: 48 ժամը նրան չեր բավարարուած. յերկար վորոնումներից հետո, նա կանգ ե առնուած բավբակե մազմզուկների վրա:

Շնորհիվ եղ նյութի՝ նա են տեսակ լար ե պատրաստուած, վոր լամպն այրվում ե 1000 ժամ անընդհատ:


Իսկ հետո նրան հաջողվում ե պատրաստել են տեսակ արհեստական մետաղե ձող, վոր շիկանալուց հետո, ավելի կարող եր դիմադրել արտաքին ազդեցություններին, քան թե բամբակե մազմզուկները:

Մի տարի հետո, Լոնդոնի Բյուրեղյա պալատում Եդիսոնի ցուցահանդեսը գրավում ե բոլորի ուշադրությունը. և են որվանից ելեքտրական լամպը մի հաղթական պտույտ ե անուած, մտնելով ամեն տեղ, լուսավորում ե մութ ու խուլ անկյունները:

Նա լուսավորում ե և՛ մեծ քաղաքները, և՛ մութ հանքահորերը, նա հմտնում սառն ովկիանոսների ու ծովերի խորքերը՝ լուսավորելով լողորդների վտանգավոր ճամբան:

Յերբ հսկայական շոգենավը հանգիստ պատուում ե ովկիանոսի ջուրը, կամ յերբ գնացքն արագընթաց սլանում ե մութ տոնելով—ամեն տեղ ելեքտրական լամպն ե հսկում, վորպես հավատարիմ ընկեր ու ցրում մութն ու խավարը, վորպեսզի լուսավորի, թեթևացնի մարդկանց ճամբան:

Ելեքտրական լամպն արդի մեր ելեքտրոֆիկացիայի նախահարապետն եր:



ՈՐԱՆԺ ԼԵՌՆԵՐԻ ՍՏՈՐՈՏԻՆ

Մենլո-Պարկուժ անց կացրած տասը տարվա ընթացքում, Եդիսոնի գործունեյության շրջանն որ-որի մեծանում եր ու յայնանում: Մենք արդեն թվեցինք նրա արած գլխավոր գյու- տերը, վոր դեռ չնչին մասն են կազմում նրա գործունեյութ- թյան: Մենք ամենևին չենք հիշատակել նրա ելեքտրական շոգեւարժը, վորը նրա տեխնիքական մեծ հաղթանակներից մեկն է:

Ամեն մի նոր գյուտ Եդիսոնից նոր շենք եր պահանջում. և նա ամեն անգամ իր հին շենքին նորն եր կցում. բայց իր բազ- մաթիվ գյուտերից հետո, Մենլո-Պարկն այլևս նրան չի բավա- րարում՝ փոքր եր ու նեղ. և նա 1886 թվին Որանժ Լեռների ստորոտին Նյու-Ջերսե քաղաքում մի նոր աշխատանոց է կա- ուցում իր նամար:

Առանց չափազանցներու կարելի յե ասել, վոր դա աշ- խարհի ամենամեծ, ամենալավ ու ամենահարուստ աշխատա- նոցն է:

Նրա ոգնականներից մեկը կազմել է եդ աշխատանոցի նկարագիրը, վորի առաջնորդությամբ մենք կարող ենք մի փոքրիկ պտույտ կատարել աշխարհի ամենահետաքրքիր հիմ- նարկություններից մեկի միջով:

Գլխավորը—յեռհարկանի շենքն է, վորը գտնվում է կենտ- րոնում՝ 250 վոտնաչափ յերկարությամբ և 60 վոտնաչափ յայ- նությամբ, չորս կողմից շրջապատված մեկ հարկանի պավի- լյոններով, վորոնք կենտրոնի գլխավոր շենքից յերկու անգամ փոքր են: Մտնելով գլխավոր շենքը, մենք նախ և առաջ տես- նում ենք գրադարանի մեծ դահլիճը: Առաջ շատ հասարակ ձե- վով է կահավորված յեղել եդ դահլիճը և յուր մեծության հա- մեմատ, արտաքուստ ել անհրապույր, բայց Եդիսոնի ծննդյան

որը—42 ամյակին, նրա ինժեներներն ու տեխնիկները վորոշում են կահավորանքը շքեղացնել ու գեղեցկացնել:

Հատակները Զմյուռնիայի գորգերով են ծածկում, պատերից թանկարժեք նկարներ կախում, սենյակներն արմավենու ծառերով և ուրիշ մշտադալար բույսերով զարդարում. սենյակի մեջ տեղը ընթերցանության համար կլոր սեղան դնում, հարմար ու փափուկ բազկաթոռները հետը. ես բոլորը միասին գրադարանին շքեղ ու սիրուն տեսք են տալիս:

Նախաձեռնողները հետաքրքրվում եյին, թե ինչ ընդունելութուն կըգտնի ես բոլորը Եդիսոնի կողմից: Նա մեծ ուշադրութունից զգացված ընկերներին իր սրտագին շնորհակալութունն է անում: Նստում է բազկաթոռներից մեկի վրա, նայում է զարդարված սենյակին և պահարաններին, ուր 40 հազար հատոր գիրք կար ժողոված տեխնիքական գրականության բոլոր ճյուղերից:

Յեվ ո՛վ գիտեր, թե եդ նստած ժամանակ մտքովը ինչեր չեյին անցնում. արդյոք չէր հիշում իր անցած դժվար ճամբան, չերբ ենքան մեծ դժվարութուններով եր ձեռք բերում ելեքտրականության վերաբերյալ գրքերը, վոր շտապ-շտապ կարդում եր իր խղճուկ ու փոքրիկ սենյակում, տանում չնչին գնով գրավաճառներին ծախում, վորպեսզի իր ծնողներին փող հասցընի կամ իր ճաշի վարձը վճարի:

Գրադարանի դահլիճի մեջ տեղը հայտնի «Լույս» արձանն եր կանգնած, վորի վոտքերի տակն ընկած եր փշրված լապտերը, իսկ աջ ձեռքով հաղթական ձևով բարձր բռնած եր Եդիսոնի ելեքտրական լամպը:

Բացի եդ, գրադարանում թանկագին քարերի ու մետաղների հավաքածու կար, վորը Եդիսոնը Փարիզի ցուցահանդեսին եր ձեռք բերել: Լույսի ճառագայթները, բեկվելով նրանց մեջ՝ փայլվում եյին հազար ու մի գույնով, սպիտակից ըսկըսած մինչև վառ կարմիր գույնը. եդ բոլորը շողալով, շողշողալով լույս տրում եր հազար յերանգով և շուրջը լույսի ու գույների կողմ արդական թագավորութուն ստեղծում:

Սա նաև մի յերգեհոն կար, և նրա ոգնական-

ներն ու տեխնիկներն աշխատում էյին յերգեհոնի նվագի տակ:

Գրադարանից հետո գալիս է գահլիճը— թանգարանը, վոր առաջին սենյակից յերկու անգամ մեծ է և նմանը չկա յերկրիս յերեսին: Եղ թանգարանում կարելի յե գտնել ամեն բանի նմուշ, թե հում և թե մշակված դրուժյամբ. եղ իրերը հավաքելու ժամանակ Եղիսոնը վորոշել էր՝ ամեն բանից գտնի, բերի, վորպեսզի վոչ մի բանի կարիք չզգա:

Բաժիններից մեկում տեսնում եք կենդանիների խրտվիլակներ ու կմախքներ, շորացրած բույսեր. մյուսում՝ գանադան համեմունքների ու գաղութային ապրանքների հավաքածու, յերրորդ բաժնում՝ արդյունագործություն. շորորդում՝ յերկաթի թագավորություն, և եսպես անվերջ: Աշխարհի թանգարաններից վոչ մեկում ենքան հարուստ ու բազմազան հավաքածու չկա, ինչպես եստեղ:

Ամեն, ամեն ինչ կա՝ նախնական պրիմիտիվ սայլից ըսկըսած ու վերջացրած էլեքտրական նավով, վայրենիների գլխի սարք ու կարգից մինչև ամերիկացի շենտեյմենների կոկիկ ցիլինդրը:

Ես թանգարանը մարդկության կուլտուրայի թանգարանն է, և են միջոցին, յերբ դուք ապշած մի բաժնից մյուս բաժինն եք անցնում, հարևան շենքերից լսում եք աշխատող մեքենաների անլուելի աղմուկը և ահագին մուրճերի խուլ զարկը — եղ բոլորը, կարծես, ասում են, վոր կուլտուրան այստեղ իր գործնական աշխատողներն ունի:

Ես աշխարհից ընկնում ենք մի ուրիշ աշխարհ՝ ծանր ու կոպիտ աշխատանքների համար հատկացրած արհեստանոցը: Եստեղ է պատրաստվում նաև դինամո-մեքենայի և մետաղյա հանքերը մանրացնող հսկայական մեքենաների մասերը:

Են ժամանակ, մինչդեռ գրադարանում և թանգարանում կատարյալ լուրթյուն եր տիրում, եստեղ, ընդհակառակը՝ անլուելի աղմուկ, դղրդոց ու կենդանություն, վոր յեռում է շուրջըդ ամենուր:

Մուրճերի անդադար զարկը, վոր ընկնում է զնդանի վերա, մեծ սղոցների ճիչը, հազարավոր անիվների վրզզոցը, շրջթանների զրնգոցը ողբ լցրել էյին ցավից մռնչող հրեշի մռնչյունով: Յեվ եղ ձայների քառսի մեջ պողպատի եղ դժոխ-

քում մի մեքենայից մյուսն են վազում բանվորները, վորոնց հավատարիմ հայացքին ու կուռ բազկին են հպատակվում պողպատե հրեշները:

Մեզ թվում է, թե մենք մի մեծ գործարանում ենք գտնվում, բայց իրոք, դա գործարան չէ, այլ փորձերի մի աշխատանոց: Են արհեստանոցը, վորտեղ մենք հիմա յենք գտնվում — նոր գյուտեր պատրաստելու և հին գյուտերը կատարելագործելու համար է այդ:

Արհեստանոցին կից դահլիճներից մեկում գտնվում են Եղիսոնի դինամո-մեքենայի զանազան տեսակները: Նույն հարկումն է գտնվում են բաժինը, ուր հավաքված են առանձին խնամք պահանջող նուրբ ապարատները, ինչպես՝ հեռագիրը, հեռախոսը, միկրոֆոնը և ձայնագիրը: Ես բաժնում աշխատում են ավելի մեծ փորձառություն ու գիտություն ունեցողները:

Եստեղ են պատրաստում քիմիական և ֆիզիքական փորձերի համար անհրաժեշտ ապակե անոթները: Հետաքրքիր է տեսնել՝ ինչպես ապակե զանգվածը կամաց-կամաց զանազան ձևեր է ստանում, սառչում ու մնում:

Հարևան սենյակում ելեքտրական լամպաներն են փորձում — վորոշում են ու չափում ամեն մի լամպի լույսի ուժը և նրա վառվելու տևողությունը: Նույն հարկում, բայց մի ուրիշ սենյակում Եղիսոնի գյուտերն են՝ դասավորված հաջորդաբար, ժամանակագրական կարգով. եղ ժողովածուն հետաքրքիր է և նրանով, վոր ցույց է տալիս Եղիսոնի մտքի աստիճանական զարգացումը, ինչպես շարունակ մասնակցելով ցուցահանդեսներին, ամբողջ աշխարհին ցույց է տալիս ամերիկյան հանճարի զարմանալի արտադրողականությունը:

Եղիսոնյան թանգարանը կազմելում ինքը՝ Եղիսոնը վոչ մի մասնակցություն ցույց չի տվել, այլ նրա ընկերներն ու ոգնականներն են հիմնել:

Գլխավոր շենքը շրջապատող չորս պավիլյոններից մեկը քիմիական փորձերի համար է, և եղ պավիլյոնում հաճախ կարելի չէ տեսնել Եղիսոնին. ազատ ժամանակ կամ հետազոտություններ անելիս միշտ եղ պավիլյոնն է գնում. նրա սիրած պավիլյոնն է: Քիմիան միշտ, դեռ պատանեկան հասակից՝ նրա սիրած առարկան է չեղել և հիմա չել առաջվա յեռանդով շարունակում է պարապել:

Յերկրորդ պավիլյոնն առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում բոլոր տեխնիկների համար: Եսպես ասած՝ գալվանաչափական բաժինն է այդ. եստեղ մասնագետը կարող է ծանոթանալ աշխարհի ամեն տեսակի էլեքտրական ապարատներին, գալվանոմետրներին, դինամոմետրներին, էլեքտրոմետրներին, մագնիտոմետրներին, ֆոտոմետրներին և ուրիշ շատ ապարատներին, վորոնք մեք-ով, այսինքն՝ չափով են վերջանում: Եդ պավիլյոնը կառուցելու ժամանակ յերկաթ և առհասարակ մագնիսական հատկութիւն ունեցող վորևէ մետաղ չեր կարելի գործածել, վորովհետև դրանց ներկայութիւնը կարող եր վատ ազդել թանկ գործիքների վրա: Առհասարակ Եդիսոնը մի առանձին հոգատարութիւն էր ցույց տալիս դեպի գործիքները. ցնցումից ու շարժումից ապահով պահելու համար, շենքի գլխավոր պատը 20 վոտնաչափ խորն էր հիմնած, իսկ գործիքները՝ դրած են քարե մեծ պատվանդանի վրա:

Յերրորդ պավիլյոնում էլեքտրականութեան ոգնութեամբ մանրացնում են մետաղե հանքը: Եստեղ կարելի յե ամեն տեսակի մետաղ տեսնել՝ վոսկի, արծաթ, պլատին, պղինձ, յերկաթ և այլն:

Հետաքրքրական է տեսնել հանքը մանրացնող հսկայական մեքենան աշխատելու ժամանակ:

Հանքի մանրացած մասը խորը ձագառների միջով անցնում է մեծ և ուժեղ մագնիսի մոտով, վոր դեպի իրեն է քաշում մետաղի մանր մասերը, իսկ ավելի խոշորներն անցնում են, դնում: Յերբ ամբողջ հանքը բոլորովին մանրանում է, անց են կացնում զտող մեքենայի միջով, վորտեղ մագնիսն իրեն է քաշում զուտ մետաղե մասնիկները, իսկ մնացածը՝ դուրս է շարտում: Եստեղ նույն է կատարվում, ինչ վոր հատիկները մաքրող մեքենայում, վորտեղ մանր հատիկները, դարմանը և աղըրը դուրս են թափվում մեքենայի յետևի մասերով:

Հիմա, մեզ մնում է տեսնել չորրորդ պավիլյոնը, վորտեղ պատրաստվում են կենդանի պահերներ:

Եդ՝ հաջորդ գլխում:

Կ Ի Ն Ե Մ Ա Տ Ո Գ Ր Ա Ց

1887 թվին Եղիսոնը մի նոր միտք է հղանում՝ են տեսակ ապարատ ստեղծի, վոր մարդու աչքի համար նույն դերը խաղա, ինչ վոր ձայնագիրն ականջի համար:

Ճիշտ է, լուսանկարչության գյուտը մեծ գյուտ է, պատկերներ է տալիս, բայց նրանք մեռած են, անշարժ: Նրանք շարժման մի վայրկյանն են տալիս, մի դրութիւնը. բայց վոչ յերկրի, մարդկանց մշտական շարժումը, պրոցեսսը: Լուսանկարը տալիս է ձյաւորի և իր ձիու ցատկելու մոմենտը, վագրի մի վայրկյանը, բայց ամբողջ ընթացքը, շարժումը—շարունակութիւնը չի կարողանում տալ:

Ալիքների ճողփիւնը, մարդու քայլվածքը, թռչնի թռչելը — եդ բոլորը լուսանկարչության սահմանից դուրս է: Յեւ 1887 թվից Եղիսոնը եդ բացը լրացնելու վրա յեր մտածում:

Բազմաթիւ անհաջող փորձերից հետո, վերջապես նրան հաջողվում է են տեսակ յերկու ապարատ շինել, վորոնք միանալով՝ տալիս են կենդանի նկարներ. մեկը կոչվում է կինետոգրաֆ, վորը յերևույթները վերցնելու, նկարելու համար է, իսկ մյուսը՝ կինետոսկոպ պատկերները ցույց տալու համար:

Կինետոգրաֆի վերցրած պատկերը կարող է մի վայրկյանում 46 պատրաստի լուսանկար տալ, ուրեմն մի ըոպելում 2,700 պատկերով:

Եսպիսով, Եղիսոնը կարող էր 5 ըոպե տևող յերևույթ ցույց տալ մոտ 14,000 իրար հաջորդող պատկերներով:

Բայց, մարդու աչքը չեր կարող դիմանալ եդ արագությանը, և դրա համար Եղիսոնը պատկերների թիւը պակասեցրեց մինչև 15-ի մի վայրկյանում:

Սկզբում վորևէ յերևույթի հաջորդական շարժումը լուսանկարվում է յերկար ցելյուլոյիդից պատրաստած ժապավենի

վրա, հետո ուժեղ լուսի միջոցով անդրադարձվում սպիտակ կտավի վրա:

Եղիսոնն իր Որանժի աշխատանոցում մի փոքրիկ թատրոն եր սարքել, վորտեղ վորձում եր նոր գյուտը:

Եկրանի վրա սկզբում ցույց եր տալիս կինեմատոգրաֆով վերցրած յերևույթներն ու դեպքերը:

Մի անգամ Եղիսոնն իր աշխատանոցն ե հրավիրում հընդիկներին և խնդրում, վոր ցույց տան իրենց մեջ տարածված պարերը, խաղերը և սովորությունները:

Հնդիկները համաձայնում են ու Եղիսոնի առաջ սկսում են պարել, խաղալ, թռչկոտալ, առանց կասկածելու, վոր Եղիսոնը եղ ժամանակ կինեմատոգրաֆով եղ բոլորը մանրամասնորեն վերցնում ե:

Մի առ ժամանակից հետո, յերբ ամեն ինչ պատրաստ ե լինում ժապավենի վրա, նա նույն հնդիկներին նորից հրավիրում ե իրեն մոտ:

Հնդիկները գործին անտեղյակ, գալիս են թատրոնում հանգիստ տեղավորվում: Թատրոնը բոլորովին մթնում ե. եկրանի վրա սկզբում սպիտակ շրջանակն ե յերևում, հետո անորոշ ստվերներ, և ապա յերևում են նույն հնդիկները պարելիս, խաղալիս ու թռչկոտելիս:

Հնդիկները սարսափով են նայում եղ կախարդական տեսարանին, հետո, յերբ պարզվում ե, վոր եղ պար յեկողները հենց իրենք են՝ սարսափած մի անասելի վոռնոց ու աղաղակ են բարձրացնում, աթոռներն աջ ու ձախ թափելով՝ դուրս են փախչում թատրոնից: Են փախչելն ե, վոր փախչում են եղ կախարդական տնից:

Եղիսոնին հաջողվում ե նույն ձևով լուսանկարել, ճիշտ ե, մեծ դժվարություններով, մի կաթիլ ջրի կյանքը: Մեզնից ամեն մեկը գիտե, վոր մի կաթիլ ջրի մեջ միլիոնավոր ինֆուզորյաներ են ապրում՝ իրենց յուրահատուկ խորհրդավոր կյանքով: Յեվ հետաքրքրվողներն եղ աշխարհը կարող եյին տեսնել միայն գիտնականի առանձնասենյակում, միկրոսկոպի միջոցով:

Իսկ հիմա, շնորհիվ Եղիսոնի, Եկրանի վրա կենդանանում  
է մի կաթիլ ջուրը, և մենք տեսնում ենք պարզ ջրի միջի  
կենդանիներին, նրանց կյանքը, շարժումները նրանց, կռիվը. —  
մեր առաջ բացվում է մեզ անհայտ աշխարհի գաղտնիքները:

Հետագա տարիները մյուս գյուտարարները կատարելա-  
գործում են Եղիսոնի ես ապապարատը, և հիմա մեզնում հայտ-  
նի յե ամենին ու ամենուր եղ ապապարատը կինո անունով:

Իժբաղդաբար, մեզնում կինոյի վրա նայում են վորպես  
հաճույքի, ժամանցի վրա, մինչդեռ նա կարող եր կրթական  
մեծ դեր խաղալ, յեթե ավելի հաճախ ցույց տային մեզ ան-  
ծանոթ նոր քաղաքների ու ժողովրդների կյանքը, բացելին  
բուսական և կենդանական աշխարհը, ցույց տային բնության  
գեղեցիկ տ' սարանները:

Չ. գ հետ միասին մի քանի ըոպեյով ներս մտնենք եղ կի-  
նոներից մեկը. տեսեք, թե ինչքան բան կարող եք տեսնել ու  
սովորել կարճ ժամանակում:

Եկրանի վրա, մեր առաջ, Անգլիայի ածխահանքերի  
ու խուլ գյուղերից մեկն է: Իեռ մութն է. նոր է լուսանում.  
տեսնում ենք՝ ինչպես մի խրճիթից մյուսն են գնում բանվոր-  
ները, դեմքները հոգնած ու մռայլ, կարճատև ծանր քնից զարթ-  
նելով՝ պատրաստվում են ածխահանքերը աշխատանքի գնալու:  
Նրանցից մեկը շտապ-շտապ առավոտվա սուրճն է խմում, գոր-  
ծիքները վերցնում ու դուրս գնում փողոց: Մի ուրիշը տխուր  
դեմքով գրկում է իր փոքրիկ աղջկան, համբուրում ու մնաս  
բարով ասում:

Ահա մի նեղ փողոց: Մեր առաջ խմբերով բանվորները գը-  
նում են. հետո տեսնում ենք ածխահանքերն իրենց ստորեր-  
կըրյա խոր ու մռայլ անցքերով, ուր փոքրիկ զամբյուղներով  
իջնում են բանվորները:

Վերջապես և ահա ածխահանքերը. բանվորները կռացած  
դրուժյան մեջ պատռում են ածխի հաստ շերտը, իրենց ճամ-  
բան լուսավորելով փոքրիկ լամպաներով: Իսկ հետո, ածուխը  
բարձրացնում են վեր, միլլիոնավոր փթերով տարածում, մարդ-  
կանց լույս ու տաքություն մատակարարում:

Յեվ եղ բոլորը մեր առաջ ենքան մոտ ու ենքան կենդա-

նի յե կատարվում, թվում ե, թե մեզ մոտ են, մեզ հետ են, և մենք կարող ենք նրանց հետ խոսել:

Մի ուրիշ պատկեր. ծովափ ե... Ալիքները ծուլ-ծուլ ճողփում են Սիցիլիայի ափերին. լուսինը մեզմ լույսով լուսավորում ե ծովը. իսկ գեղեցիկ այգիներում ու պուրակներում— մշտադալար նոճիները կատարներն իրար թեքած՝ ասես հեքյաթներ են փսփսում իրար:

Առագաստանավերն արագ-արագ իրար լետևից ծովի յերեսն են դուրս գալիս, իսկ սիցիլիական ճարպիկ ձկնոսներն ուրախ ու զվարթ ծովն են ձգում ուռկանները՝ ձուկ բռնելու:

Յերկինքը հանկարծ ամպոտում ե, լուսինը՝ թագնավում: Ծովն սկսում ե յեռալ, աղմկել ու շոգի արձակել՝ կարծես մի վիթխարի հրեշի կրծքից. վրա յե հասնում քամին, և ձկնոսները, շտապ թիավարելով, ափն են դառնում:

Յեվ եսպես անվերջ պատկերներ հաջորդում են իրար: Տեսնում ենք անապատներով սլացող գնացքը, և քաղաքների ներսի կյանքը, և գործարանների շարժումը— և ամեն ինչ կենդանի ու վառ. բայց մի խոշոր պակասություն ունի ես գեղեցիկ գյուտը— ամեծ ինչ լուռ ե կատարվում, անձայն:

Ալիքները զարկվում են ափերին առանց ձայնի, շոգեգնացքը սլանում ե առանց աղմուկի, մարդիկ խոսում են, ծիծաղում առանց վորևե ձայն հանելու. և եզ լուռթյունը շարժման ու կենդանության մեջ մի տեսակ ճնշիչ տպավորություն ե անում մարդու վրա:

Եդիսոնը շատ լավ գիտեր եզ պակասությունը և աշխատում եր միացնել կինետոսկոպն ու ձայնագիրը:

Սկզբում ձայնագիրը վերցնում ե դնում կինետոսկոպի մեջ, բայց հետո համոզվում ե, վոր յերկու ապարատը պետք ե աշխատեն առանձին առանձին, մինչդեռ գործողության մեջ միասին պիտի լինեն:

Յերկար փորձերից հետո Եդիսոնին հաջողվում ե վերջապես կենդանի-խոսուն պատկերներ ստանալ:

Չայները հաղորդվում եյին հասարակության շնորհիվ ձայնի ձագարաձև մեծ խողովակի: Յերկու ապարատի ոգնու-

թյամբ հաջողվում է պատկերներ տալ իրենց համապատասխան ձայներով:

Յերգիչներն ու յերգչուհիները յերգում էին, որկեստորը նվագում էր, շոգեշարժը սուլում, և թեև պակասությունները յերևում էին ու թերի յեր գործը, բայց Նդիսոնն ուրախանում էր, վորովհետև նա խորը համոզված էր, վոր մեծ ապագա պիտի ունենա իր նոր գյուտը:

Իր ընկերներին ասում էր. —

«Յես վոչ մի վայրկյան չեմ կասկածում, վոր կարճ ժամանակից հետո մենք կարող են գյուղերում ոպերաներ տալ շատ եժան գներով: Յեվ գեղարվեստը մատչելի կըդառնա բոլորին:

Յեվ վոչ միայն ոպերաները, գեղարվեստը լայն ժողովրդականություն կըստանան, այլ ամեն, ամեն բան. որինակ՝ հազարավոր վերստի վրա արտասանվող ճառերը — կարող ենք լսելի դարձրնել գյուղերում և են ձևով, վոր լսողները տեսնեն ճառախոսի դեմքը, շարժումները, միմիկան:

Յեվ եդ ձևով կարելի յե պահել, պահպանել ապագա սերունդների համար ժողովրդների կյանքն ու պատմությունը՝ պատկերներով ու հնչյուններով:

Յեվ մեր 20-րդ դարու պատմությունը կըլինի պատկերներով, խոսքերով ու հնչյուններով՝ միշտ կենդանի ու մնայուն, վորի հետ համեմատած գիրքը — մեզ անգույն ու մեռած կըթրվա»...

Մեր գործը պիտի լինի՝ ենպես անենք, վոր եդ մեծ գյուտը իսկապես վոր կատարի իր դերը, կատարելագործվի, տարածվի և լուսավորի աշխատավոր լայն մասսաները:

ԵԼԵՔՏՐՈՑԻԿԱՑԻԱՅԻ ՊԻՈՆԵՐԸ

Եղիստնի ամբողջ կյանքում առաջին տեղը բռնում էր գործը, աշխատանքը. աշխատանքն էր, վոր կարմիր թելով անցնում է նրա կյանքի միջով:

1890 թվին իր արած գյուտերի համար 500 շնորհագիր էր արդեն ստացել և 300 նոր գյուտ էլ սպասում էին կյանքում կիրարկելուն:

Բայց Եղիստնը միայն գործի մարդ չէր, և վոչ էլ իր գործի ստրուկը: Նա նախ և առաջ մարդ էր, բառիս ամենալայն իմաստով՝ տաք սրտի տեր, զգայուն ու լայն հոգով:

Դեռ 12 տարեկան հասակից նա լրագրավաճառ էր դարձել իր ընտանիքը պահելու համար: Յեվ իր արկածալիլ ու ծանր կյանքի ընթացքում նա յերբեք չէր մոռանում իր ծնողներին, միշտ ոգնում էր, մի բան էր ուղարկում նրանց, հաճախ իրեն առանց ճաշի ու հացի թողնելով:

Նա շատ էր սիրում իր մորը, շատ էր կապված նրան և իր մտքերն ու ծրագրները միշտ մորն էր հայտնում, նրան էր ասում. մայրն էլ իր հերթին փոխադարձաբար սիրում էր իր տղային և հավատում էր նրա հաջողությանն ու ապագային: Բայց մայրն իր տղայի պայծառ ու մեծ ապագան չի տեսնում. նա վախճանվում է 1871 թվին, յերբ «փոքրիկ Ալ»-ը համաշխարհային փառքի ու պատվի առաջին աստիճանի վրա յեր կանգնած միայն:

Չնայած եղ մեծ անվանն ու փառքին, Եղիստնը նման չէր են գոռոզ մարդկանց, վորոնք մեծամտորեն յերևակայում են և անմատչելի յեն լինում մարդկանց: Ընդհակառակը, եղ մեծ մարդը կյանքում հաճախ են տեսակ կատակներ էր անում, վորոնք հիշեցնում էին «փոքրիկ Ալ»-ի շարաճրճությունները:

Մի անգամ նրա ընկերներից մեկը մտաը հյուը է դալիս:

Նգիստներ վճուում ե գլխին մի խաղ խաղալ. ենպես ե անում, վոր իր բարեկամին ավելի վաղ ե քնեցնում, նախորոք ել սարսափելի պատմութչուն ե անում, առանց են ել վախկոտ իր բարեկամի սիրտն ահով լցնում: Վերջինս անկողնուճե ե լինում, յերբ կես գիշերին, ժամացույցը ժամը 12-ը զարկելուց հետո, խուլ ե ընկած ձայնով լսում ե.



— Կես գիշերը հասավ, ո՞վ մարդ, պատրաստվիր մահվան: Առանց են ել արդեն վախեցած, հչուրն եդ խոսքերը լսելով ահից անկողնում բարանում ե, շի կարողանում շարժվել. վերջապես, հաջողվում ե, անկողնից մի կերպ դուրս ե թռչում ե վազում ե Նգիստնի սենյակը. Նգիստներ նրան դիմավորում ե հանպիստ ծիծաղով, նստեցնում ե ե իր նոր արած գյուտերից պատմում:

Մի ուրիշ անգամ նրա սրամիտ կատակն ավելի մեծ տպա-

վորութիւնն եւ անուամբ եղ եւն ժամանակն եր, յերբ նա զբաղ-  
ված եր ելեքտրական գնացքի գյուտով:

Են ժամանակ նա դեռ հարուստ չեր, և դրամատերերից  
մի քանիսն ուզում էին սրան ոգնել, վոր հետո կարողանան  
շահագործել նրա գյուտը:

Մի անգամ եղ «պարոնները» գալիս են Եդիսոնի մոտ, ի-  
մանալով ինչ դրութեան մեջ ե գործը:

Նրանց խոսելու տոնից Եդիսոնը նկատում ե, վոր նրանք  
մեծ թերահավատութեամբ են նայում իր արած գյուտին, և  
իր շոգեշարժի արագութեանն ել չեն հավատում:

Եղ բանը Եդիսոնին բարկացնում ե:

Ժպտալով, հյուրերին հրավիրում ե, վոր շոգեշարժը նըս-  
տեն, փորձելու համար մի քանի պտույտ անեն:

Հյուրերը սև սյուրտուկները հագին, գլխներին բարձր ցի-  
լինդր, շատ ծանր ու լուրջ նստում են շոգեգնացքը, կարծե-  
լով, վոր Եդիսոնը սկզբում դեռ մի դասախոսութիւն կըկարդա  
— իր նոր գյուտերին ծանոթացնելու համար:

Բայց Եդիսոնը սրանց հետևից անմիջապէս թռչում ե,  
նստում ու շոգեշարժը բաց թողնում: Յեվ վայրկյան առ  
վայրկյան արագութիւնն ավելացնում ե:

Կայծակի արագութեամբ, անվերջ պտույտներ անելով, շո-  
գեշարժը թռչում ե: Նրանց ականջները վզգում են, գլխարկ-  
ները թռչում, զգեստների փեշերը դրոշակների պէս քամին  
ուռցնում, պինդ շոգեգնացքին էլին կպել, վոր շընկնեն. և  
խնդրում էին Եդիսոնին, վոր կանգնեցնի՝ իրենք իջնեն, բայց  
նա չլսելուն ե տալիս և հեգնական ծիծաղով շարունակում  
թռցնելը:

Յերբ հասցնում ե ամենաբարձր արագութեանը, են ժա-  
մանակ հանկարծ կանգնեցնում ե, են տեսակ ցնցում ե առաջ  
բերում, վոր քիչ ե մնում վայր ընկնեն:

Ես փորձից հետո նրանք համոզվում են ու հավատում ե-  
լեքտրական շոգեշարժի ուժին և առանց խոսք ասելու հեռա-  
նում են:

Եդիսոնը միշտ և ամենուր թշնամի յեր ամեն տեսակի

պոռոզուլթյան ու մեծահոգուլթյան—և ամեն հարմար առիթից  
ոգտվելով՝ ծաղրում եր նրանց, վորոնք գործից անտեղյակ՝  
մեծ-մեծ խոսում են ու պարծենում:

Եղիսոնի ոգնականների թվում սկզբում կային նաև հա-  
րուստ գործարանատերերի տղաներ, վորոնք սև աշխատանքի  
սովոր չեյին, վորովհետև «իրենց մոր փեշի տակ եյին մեծա-  
ցել».—Բայց նրանք Եղիսոնի աշխատանոցն եյին գալիս նրա  
մոտ կատարելագործվելու, գործնական աշխատանքներին ծա-  
նոթանալու: Յեվ եղ տեսակները շատ մեծ կարծիքի յեյին լի-  
նում իրենց ընդունակուլթյունների մասին և աշխատանքի ժա-  
մանակ ել միշտ խուսափում եյին սև աշխատանքից: Բայց եղ  
տեսակներին Եղիսոնը չեր սիրում. նրա խորը համոզմունքով  
են մարդն ե արժանի հարգանքի, վոր իր աշխատանքով ե ապ-  
րում, և ամեն բանի իր աշխատանքով ե հասնում, և վոչ թե  
պատրաստի հարստուլթյանն ու փառքին տիրանում:

Մոր փեշի տակ մեծացածներից մեկը—վորը շատ մեծ  
կարծիքի յեր իր ընդունակուլթյունների մասին, մի որ հրա-  
ժարվում ե մաքրել ապպարատը փորձի համար:

— Յես գյուտեր անող եմ, և վոչ թե սև աշխատանք  
կատարող,—հպարտորեն պատասխանում ե նա:

Եղ խոսքերը պատահամբ լսում ե Եղիսոնը, իսկույն մո-  
տենում ե նրան և խորը հարգանքով ու լուրջ տոնով ասում ե.

— Յես հազար ներողուլթյուն են խնդրում ձեզնից ևն  
մարդկանց կողմից, վորոնք ստիպել են ձեզ կատարելու սև  
աշխատանքը: Նրանք չեն հասկանում, վոր եղ տեսակ մեծ ըն-  
դունակուլթյունների տեր մարդը, ինչպիսին դուք եք, իր ձեռ-  
քերը չպետք ե կեղտոտի սև աշխատանքով: Յես սովոր եմ եղ  
աշխատանքին, յես միշտ ել հասարակ բանվոր եմ յեղել:

Ասում ե, շապկի թևերը բարձրացնում, գործիքը մար-  
բում ու տեղը դնում:


Հետո դառնում ե նրան, վորը կաս-կարմիր եր կտրել ա-  
մոթից, և ասում.

— Պատրաստ ե. հերթը ձերն ե հիմա. շատ դատարկ բան  
ե մնացել—վորևե դյուտ պիտի անեք միայն. յես եստեղ ձեզ չեմ

կարող ոգնել չեմ ել համարձակվում վորևե ոգնութիւնն ցույց տալ են տեսակ հանճարեղ մարդու, ինչպիսին դուք եք...

Շատ լավ դաս յեղավ այդ: Եղ որվանից եղ ոգնականը դառնում ե Եղիսոնի ամենալավ ու ամենահամեստ ոգնականներից մեկը:

Բայց եղ դասը մեծ ոգուտ ե բերում նաև Եղիսոնին: Նա եղ դեպքից հետո հարուստ դրամատերերի և գործարանատերե-



րի տղաներին այլևս չի ընդունում իր աշխատանոցը, գերադասում ե աշխատանքի մարդկանց, աշխատողներին:

— Չեմ սիրում անգործներին, սև աշխատանքից փախչողներին,—հաճախ եր կրկնում Եղիսոնը:

Եսքան պարզ եր ու անկեղծ Եղիսոնն ամեն բանում և ամեն դեպքում: Յեվ նա մեծ սառնասրտությամբ եր ընդունում են բազմաթիվ պատիվներն ու մեծարանքները, վոր ստանում եր աշխարհքի զանազան ծայրերից: Իսկ յերբ իր աշ-

խատանոցը հաճախողները նրան ասում են՝ «պարոն պրոֆեսսոր», նա ժպտալով ասում էր.

— Յես պրոֆեսսոր չեմ. յես միայն Եղիսոն եմ և ուրիշ վոչինչ. յես գործի մարդ եմ, և վոչ թե գիտնական:

Այո, Եղիսոնը գործնական աշխատանքի, գործի և կյանքի մարդ է:

Յեվ նրա բոլոր գյուտերը հսկայական նշանակութուն ունեն գործնական կյանքի համար, աշխատավոր ժողովրդի համար:

Մինչև հիմա նրա գյուտերով ոգտվել է միայն կասիտալիստական աշխարհը, իսկ հիմա տարածվում են ու ծավալվում մինչև հեռավոր խուլ գյուղերը և ոգտվում են շատ շատերը:

Մեր Սորհրդային յերկրների համար Եղիսոնի գյուտերը առանձին նշանակութուն ունեն:

Իլլիչն ասում էր՝ կոմսունիզմին հասնելու ճանապարհը — ելեքտրոֆիկացիան է:

Իսկ ելեքտրոֆիկացիան իրականացնելու համար պետք է ոգտագործել Եղիսոնի արած բոլոր գյուտերը:

Ելեքտրական լամպը գյուղերում, կինոն՝ գործարաններում, վորին ձգտում էր ինքը՝ Եղիսոնը, են ժամանակ կիրականանա, յերբ բոլորը միահամուռ ուժերով կաշխատեն, յերբ բանվորն ու գյուղացին ձեռք-ձեռքի տված կըվերաստեղծեն մեր կյանքում գյուտերն այն Եղիսոնի, վոր ամենայն իրավամար ելեքտրոֆիկացիայի պիոներն է:



## Ի Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

	Յերես
Գլուխ I Հնարագես ղան . . . . .	3
» II Ծանր սարիներ . . . . .	11
» III Գյուսարար . . . . .	19
» IV Հեռագիր յեվ հեռախոս . . . . .	24
» V Չայնագիր ժողովրդ . . . . .	30
» VI Ելաֆսրական լամպր . . . . .	37
» VII Որանի լեռների ստորոտին . . . . .	42
» VIII Կինեմատոգրաֆ . . . . .	47
» IX Ելեֆտոմիկացիայի պիոներ . . . . .	52




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041563

(204)

X



=====

ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

=====

